

Վ.Ա.ԿԱՊՈՒՍՏԻՆ

ԶԵՌՆԱՐԿ ԿՈՎ ԿԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСПОИОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



636.2

Կ-24

CA 332
636.2

Վ. Ա. ԿԱՊՈՒՍՏԻՆ

30 JUL 2010

Ջ Ե Ռ Ն Ա Ր Կ
ԿՈՎ ԿԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմ. Ո. Զոհրաբյանի յեզ Վ. Ավագյանի

ИНСТИТУТ
ИИ СТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՆՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1932

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Յերկրորդ հնգամյակի շեմին կաթնային անասնաբուծությունը խոշոր կարևորություն ունեցող առաջադրություն ըստացավ ԽՍՀՄ ամբողջ աշխատավոր ազգաբնակչության կաթով և կաթնային մթերքներով բավարարելու համար:

ՀԿ (բ) Կ XVII համամիութենական կոնֆերանսը 1932 թ. փետրվար ամսին համապատասխան վորոշում ընդունեց յերկրորդ հնգամյակում աշխատավոր ազգաբնակչության անդի բարելավման վերաբերմամբ:

Կոնֆերանսը գտնում է, վոր ազգաբնակչության ապահովումը հիմնական սպառողական ապրանքներով և ի միջի այլոց նաև անհրաժեշտություն ունի յերկրորդ հնգամյակի վերջին պետք է ավելանա ավելի քան յերկու-երեք անգամ առաջին հնգամյակի վերջի հանդեպ:

Դեռևս ՀԿ (բ) Կ XVI համագումարը, անասնաբուծության մթերքների աճող պահանջներից յեկներով և հաշվի առնելով, վոր անասնաբուծությունը իր հին միջոցներով առաջ տանելով չի կարող բավական քանակությամբ մթերքներ տալ, պարզ և հաստատուն կերպով ընդգծեց անասնաբուծության արմատական վերակազմության ուղին: Իր վորոշման մեջ նա այսպես ասաց.

«Ապահովել անասնաբուծության բարձրացումը և ուժեղ զարգացումը, ամենից առաջ հացահատիկային խորհրտեսությունների, նմանությամբ հատուկ անասնաբուծական խորհրտեսությունների, բարձր-ապրանքային կաթնային ֆերմաների և կերի բազայի շուտափույտ ստեղծման ճանապարհով»:

Հյուսիսային Կովկասի առաջ, վորը կաթնային անասնաբուծության զարգացման համար ունի խոշոր հնարավորություններ, կանգնած է նույնպես նրա վճռական զարգացման խնդիրը: Յերկրամասում այժմ արդեն կան տասնյակ խոշոր անասնաբուծական-կաթնային տնտեսություններ և հարյուրավոր կաթնաապրանքային ֆերմաներ: Այս (1932) տարվա ընթացքում պիտի ստեղծվեն կաթ արտադրող տասնյակ և հարյուրավոր խոշոր, սոցիալիստական տիպի տնտեսություններ:

Անասնաբուծության վերակազմության արմատական միջոցառումները մեզ համար նոր են և, դրա հետ միասին, ներքինը պետք է անցկացվեն ամենակարճ ժամանակամիջոցում: Անասնաբուծության վերակազմությունը պիտի պահանջի նաև լավ պատրաստված կադրեր, վորովհետև սոցիալիստական անասնաբուծությունը առաջ տանել պապական միջոցներով, մենատնտես սեփականատիրոջ միջոցներով, վորն իր տնտեսության մեջ ապաստարկում է 1—2 կով, չի կարելի:

Հարկավոր է պատրաստել տասնյակ հազար անասնաբուծական ստորին, միջին և բարձր վորակավորման մասնագետներ: Հարկավոր է, վոր այդ կադրերը լիակատար կերպով տիրապետեն սոցիալիստական անասնաբուծության կազմակերպության, կառավարման և սպասարկման տեխնիկային: Այս կադրերի պատրաստության ճանապարհները տարբեր են—բարձրագույն ուսումնական հաստատություններ և տեխնիկում, յերկարատև և կարճատև դասընթացներ, արդեն արտադրողականորեն և կազմակերպչականորեն ուժեղ խորհրտեսային տիպի ձեռնարկությունների մեջ արտադրական ուսուցում և այլն: Վերջապես, վորակավորության բարձրացման մի ճանապարհ է, այդ այն մասնագիտության վերաբերյալ զրականության ընթերցումն է, վորի մեջ վորևե մեկը ցանկանում է կատարելագործվել: Դրա համար էլ հենց մեր հրատարակչությունները լույս են ընծայում ամեն տեսակ, հասկանալի կերպով գրված գրքուկներ, վորոնք մատչելի յեն ամեն մի գրագետ կոլտնտեսականի և կոլտնտեսուհու համար:

Կովերի կթելը կաթնային անասնաբուծության հիմնական մասնագիտություններից մեկն է: Այս մասնագիտությունը հարկավոր է ուսումնասիրել վոչ միայն գործնականապես, կթելու ժամանակ, այլ և այդ մասին հատուկ գրված գրքերով, թեխնապես և ինչու պետք է կթելու այս կամ այն գործողությունը այսպես, և վոչ թե այնպես կատարել, հարկավոր է գործնական ուսուցումը միավորել տեսականի հետ. այն ժամանակ կթելու տեխնիկային տիրապետելը ավելի հեշտ կլինի:

Այս գիրքը հեղինակը գրել է կոլտնտեսային լայն կադրերի համար, վորոնք ցանկանում են սովորել կանոնավոր կով կթել, վորոնք ցանկանում են կթելու տեխնիկային տիրապետել և սոցիալիստական մրցման, հարվածայնության, կթելու մեջ դիմադրկության վերացման և գործավարձի հիման վրա կամենում են ակտիվ կերպով կառուցել Հյուսիսային Կովկասում սոցիալիստական կաթնային անասնաբուծությունը:



60474.67

ԿԱՔԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորպեսզի կով կթողը կարողանա պարզ և լիապես ճիշտ հասկացողություն ունենալ այն մասին, թե ինչպես պետք է կովը կանոնավոր կերպով կթել և առողջարար ու լավ կաթ ստանալ, նա պարտական է վոչ պակաս լավ իմանալ, թե ինչպիսի պահանջներին պետք է բավարարություն տա կաթը և թե ինչպես է ստացվում:

Կովի նորմալ կաթը դեղնավուն—սպիտակ հեղուկ է, հաճելի, մի քիչ քաղցրավուն համով, կազմված է զանազան նյութերի խառնուրդից, վորոնցից գլխավորն են՝ ջուրը, կաթնային յուղը, սպիտակուցներ, շաքար և հանքային նյութեր: Բացի սրանից, կաթի մեջ գազեր ել կան (շատ աննշան քանակությամբ), վորոնք նրա մեջ անցնում են արյան միջից և մասամբ շրջապատող ողից ուրիշ, կաթի համը փչացնող հոտերի հետ միասին: Կաթի այս հատկության մասին անասնաբուժության աշխատավորները պետք է միշտ լավ հիշեն և հոգ տանեն այն մասին, վորպեսզի կթելու ժամանակ անասունների բակում դարձելի հոտեր չլինեն, վորոնք կարող են կլանվել կաթի մեջ և նրան տհաճ հոտ տալ, վորն անցնում է նաև նրանից պատրաստված մթերքի մեջ:

Հետազոտենք այժմ, թե ինչ են ներկայացնում իրանցից կաթի այդ առանձին բաղադրիչ մասերը: Ինչպիսի նշանակություն ունեն նրանք մարդու սննդաբուժության գործում և ինչպիսի մթերքներ են ստացվում նրանցից:


Ջուր.—Թեև կաթի մեջ ամենաշատ քանակությամբ է պարունակվում, բայց մարդու սննդաբուժության համար կաթի մեջ վոչ մի արժեք չունի:

100 կգ կաթի մեջ պարունակվում է 82-ից մինչև 89 կգ (կամ տոկոս) ջուր—նայած տարբեր պայմաններին:

Այդպիսով կաթի մյուս բոլոր մնացած մասերը (չոր նյութերը) կազմում են 11-ից մինչև 15 տոկոս:

Կաթի չոր նյութը: Նրա բաղադրության մեջ մտնում են կաթնային յուղ, մածառակ (կամ կազեյին), սպիտակուց (կամ ալբումին), կաթնային շաքար և հանքային աղեր:

Կաթնային յուղ.—գտնվում է կաթի մեջ չափազանց մանր յուղային գնդիկների ձևով (նկ 1), վորոնց առանձին առանձին կարելի չէ տեսնել խիստ շատ խոշորացնող հատուկ գիտակային գործիքների և մանրացուցի միջոցով: Նրանց փոքր չափի մասին գաղափար կազմելու համար մատնանշենք, վոր



Նկար 1. Յուղի գնդակներ. 1—կաթի, 2—սերի յուղ վերջում կրված կաթի

ամբողջ զանգվածում: Կաթի մեջ կաթնային յուղ, նայած անասնի ցեղին, կերին, կաթնատվության ամսին և այլն, պարունակվում է 25-ից մինչև 10 տոկոս: Սերը գործ է ածվում կամ ամիջապես իբրեւ ուտելիք, կամ հետագայում վերամշակվում է թթվասերի և կարագի զանազան տեսակների: Համարյա բոլորովին մաքուր կաթնային յուղ կարելի չէ տեսնել կովի հալեցրած կարագի մեջ:

Մածառակ կամ կազեյին.—կաթի մածառակը կամ կազեյինը սպիտակուցային նյութ է: Նրա առանձին մասնիկները լողում են կաթի ջրի մեջ փոքրիկ փաթիլների նման: Նրանք գլխավորապես կաթին տալիս են մի քիչ ծորունություն և լորձայնություն: Կաթի մեջ նրանք պարունակվում են 1,9-ից մինչև 4,0 տոկոս:

Մածառակը մի քանի նյութից (թույլ թթուներից, մակարդից, բակտերիաների մի քանի տեսակներից) սպիտակ գույնի անլուծելի կտոր դառնալու հատկություն ունի, վորից նրա խտանալուց և ներսուզվելուց անջատվում է հեղուկ—շիճուկ:

կաթի վերամշակման գործարաններում մաճառակը սովորաբար մի վորեւ մթերքի յետ վերամշակվում, վոր գործածվում է թե մարդս համար իբրեւ սնունդ (խածո, պանիր) և թե ֆարերիկներում և գործարաններում հետագա վերամշակման համար (կազեյինը գործ է ածվում սոսինձ, կոճակ, սանրներ և այլն պատրաստելու համար):

Այբուսինը կարելի յետ դատել շիճուկից (մաճառակի նըստելուց հետո մնացած) յեռացման միջոցով: Այդ դեպքում ալբումինը բաժանվում է սպիտակ գույնի կտորների ձևով. կաթի մեջ նա պարունակվում է 0,4—1,4 տոկոս. վորովհետև ալբումինի քանակը կաթի մեջ քիչ է, ուստի մի վորեւ հատուկ մթերք ստանալու համար նա սակավ նշանակություն ունի:

Ալբումինը արդեն 75 աստիճան տաքություն տակ մալարդվում է: Թեև կաթի մեջ նրա պարունակությունը քիչ է, սակայն կաթի յեռացման ժամանակ այրվելով, նրան շատ տըհած, այրված համ է տալիս: Նրա այրումը հաճախ կարող է լինել այն ամանի հատակին, վորի մեջ յեռացնում են կաթը, վորովհետև ամանի հատակը ավելի բարձր աստիճանի տաքություն ունի, քան նրա պատերը: Նստելով տաք հատակին բարակ, լորձանման շերտով (մալարդված ալբումինը), այստեղ ել հենց նա այրվում է: Այդ պատճառով յեռացման ժամանակ անհրաժեշտ է կաթը խառնել, վորպեսզի ամբողջ կաթը հավասարաչափ տաքանա և վոչ թե միայն նրա ստորին շերտերը: Յեփած կաթի վրայի փրփուրը կամ փառը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մալարդված և յերես բարձրացած սպիտակուց—ալբումին:

Կարնաւաֆար կաթին տալիս է քաղցրավուն համ: Շիճուկի գոլորշիացման ժամանակ (կաթից յուղը, կազեինը և ալբումինը ջուկվելուց հետո) նա դուրս է ընկնում սպիտակ բյուրեղների ձևով: Կաթի մեջ պարունակվում է 4-ից մինչև 5 տոկոս: Նրան կաթից անջատելը կապված է տեխնիկական դժվարությունների հետ և այդ պատճառով ել միայն քիչ գործարաններ զբաղվում են նրա մշակությամբ:

Հանձնալիս աղեր: Կաթի մեջ պարունակվում են լուծված զրուկյամբ 1,5-ից մինչև 0,9 տոկոս քանակությամբ: Նորմալ կաթի համից համարյա թե չի զգացվում նրանց գոյությունը, բայց կաթնատվության վորոշ շրջաններում (ծնվելու մոտիկ և ցամքվող կովերի) նրանք կաթին տալիս են դառնաղի համ, վորովհետև գտնվում են ավելի մեծ քանակությամբ:

Կարի բաղադրության փոփոխությունը կախված է զանազան գործոններից. կաթի մեջ վերևում նկարագրված բաղադրիչ մասը պարունակվում է փոփոխական քանակությամբ: Կաթի տոկոսային բաղադրությունը զանազան պատճառներից կարող է խիստ փոփոխվել: Այդ պատճառներն են՝ կենդանու ցեղը, կովի անհատական առանձնատկությունները, կերակրելը, կենդանու տարիքը, կաթնատվության ամիսը, կթելու յեղանակն և այլն:

Մինչև անգամ որվա ընթացքում, մինչև իսկ մեկ անգամ կթելու ժամանակամիջոցին միևնույն կովի կաթը տարբեր բաղադրություն ունի (կթելու սկիզբը և վերջը): Իբրեւ որինակ, մեջ բերենք մի քանի տվյալներ կաթի բաղադրության մասին, վոր կախված է զանազան պատճառներից (տես աղյուսակ 1, 2, 3, 4):

Աղյուսակ 1

Կարի առանձին բաղադրիչ մասերի փոփոխությունը կովի կրման ժամանակի ընթացքում:

Կաթնատվության ամիսը	Չոր նյութերի % -ը	Ցուղի % -ը	Սպիտակուցների տոկոսը
1	13,60	3,87	4,13
2	12,74	3,73	3,44
3	12,54	3,74	3,25
4	12,41	3,72	3,26
5	12,65	3,88	3,28
6	12,66	3,92	3,29
7	13,04	4,15	3,42
8	13,30	4,32	3,47
9	13,85	4,80	3,48
10	14,66	5,29	3,88
11	15,07	5,57	3,92

Աղյուսակ 2

Զանազան ծագումն ունեցող կովերի կարի առանձին բաղադրիչ մասերի տոկոս:

Չորանից է կովը	Չոր նյութերի % -ը	Ցուղի % -ը	Սպիտակուցների % -ը (ընդհանուր)
Հուս. Գերմանիայից	12,00	3,20	,40
Լամանշ կզզուց	14,00	5,20	3,90
Յարոսլավի նահանգ	13,00	4,14	3,36
Սրենյայան Սիբիր	14,80	4,60	4,52

Այս աղյուսակից յերևում է, վոր կաթի առանձին բաղադրիչ մասերը կաթնատվության շրջանում փոփոխվում են: Որինակ, յուղի տոկոսը: Կաթնատվության սկզբում մինչև 5 ամիս յուղի տոկոսը քիչ թե շատ հաստատուն է, իսկ հինգերորդ ամսից հետո, կովի կաթնատվության վերջին շրջանում, յուղի տոկոսը սկսում է ուժեղ կերպով մեծանալ:

Ձանազան տեղերում տարբեր ցեղերի անասուն են պահում: Յեթե համեմատենք այս թվերը, կտեսնենք, վոր զանազան ցեղերի կաթի բաղադրութունը նույնպես տարբեր է: Կան ցեղեր (որինակ՝ Արևմտյան Սիբիրից, Լամանշ կղզուց), վորոնք ավելի յուղալի կաթ ունեն, մյուսները ավելի քիչ յուղ են տալիս (որինակ, Հյուսիսային Գերմանիայի կովերը): Ինչպես արդեն վերևում ասվեց, վոչ միայն տարբեր ցեղերի կովերի կաթի բաղադրությունն է փոփոխվում, այլ և մինչև անգամ միևնույն կովինը կաթնատվության ընթացքում: Որվա ընթացքում և մինչև անգամ միևնույն կթի ընթացքում, դարձյալ կիթը փոխվում է:

Աղյուսակ 3

Կթի ժամանակի ազդեցությունը կաթի բաղադրության վրա

Կթի ժամանակը	Չոր նյութերի %-ը	Ցուղի %-ը
Կեսորին	13,35	4,31
Յերեկոյան	13,01	4,01
Առավոտյան	12,79	3,64

Յերևում է, վոր առավոտյան կիթը ավելի աղքատ է յուղով, իսկ կեսորվանը՝ ավելի հարուստ: Այդ լինում է այն ժամանակ, յերբ կիթը կատարվում է հավասար ժամանակամիջոցներից հետո, վորովհետև յերեկոյան և առավոտյան կիթերի միջև սովորաբար ավելի շատ ժամանակ է անցնում, քան թե առավոտյան և կեսորին, ուստի և առավոտյան ել կովը քանակապես ավելի շատ կաթ է տալիս, բայց յուղի քիչ տոկոս պարունակությամբ: Ընդհակառակը, կեսորվան կիթը ավելի քիչ է, քան առավոտյանը, բայց դրա փոխարեն յուղի տոկոսն ել նրա մեջ ավելի շատ է:

Ցուղի %-ը կաթի մեջ	Մ ե կ կ թ ի բ ա ժ ի ն ը									
	1	2	3	4	5	6	7	8	9	10
	1,35	1,50	1,60	2,40	3,40	4,45	5,20	5,65	6,40	8,60

Յերեվում է, վոր կթելու վերջում ստացվող կաթն ավելի յուղոտ է: Այդ այն պատճառով է լինում, վոր ինչպես հետագայում կտեսնենք, յուղը կանգ է առնում կրծի կաթնային խողովակների մեջ, այդ պատճառով ել նրա ամենաշատ քանակը կթվում է վերջին հերթին: Դրա համար շատ կարևոր է, վոր կով կթողները կովը կթելին ամբողջովին, այն ժամանակ յուղն ել կաթի մեջ ավելի կլինի:

Այս չորս աղյուսակների մեջ բերված որինակներն ավելի բերվ կերպով ցույց են տալիս, թե ինչպես զանազան պատճառների շնորհիվ փոխվում է կաթի տոկոսային բաղադրությունը:

Կաթի միջին բնական բաղադրությունը: Յեթե մեծ քանակությամբ կաթի քիմիական վերլուծություններ կատարենք, վորը վերցված է զանազան ցեղերի կովերից, կաթնատվության տարբեր շրջաններում, զանազան կերուկ կերակրված և այլն և կաթի զանազան բաղադրիչ մասերի միջին տոկոսները դուրս բերենք, այն ժամանակ կլինի հետևյալը:

Աղյուսակ № 5.

Ձանազան նյութերի միջին պարունակությունը կաթի մեջ

Կաթի բաղադրիչ մասերը	100 մաս կաթի մեջ պարունակվում է մաս (տոկոսներով)
1. Չուր	87,50
2. Չոր նյութեր	12,50
Ընդամենը	100,00
Այդ թվում	
ա) Ցուղ	3,50
բ) Կաղերն	2,80
գ) Ալբումին	0,60
դ) Կաթնաշաքար	4,80
յե) Հանքային աղեր	0,70
զ) Մյուս բաղադրիչ մասեր	0,10
Ընդամենը	12,50

Առանձին կովերի կաթերը իրարից տարբերվում են իրենց բաղադրությամբ, սակայն շատ կովերից ստացված կաթի խառնուրդը աղյուսակում ցույց տրված այս միջին բաղադրության մոտենում է կամ նրանից շատ քիչ է տարբերվում:

Կաթի ֆիզիկական հատկությունները: Նորմալ, թարմ կթված կաթը սպիտակ գույնի յե, թեթեւակի դեղնավուն գունավորությամբ:


Սերը քաշած կաթը, ընդհակառակը, կապտավուն գունավորության է լինում, վորի պատճառով հենց նրան կարելի չէ տարբերել անարատ կաթից: շիճուկը կալճի նման սպիտակ է, անթափանցիկ, համը՝ անուշ, դյուրեկան: Յերկար ժամանակ մնացած կաթը թթու համ է ստանում:

Կաթը սառչում է 0,5 աստիճան ցրտության տակ և յեթե սառած դրությամբ յերկար չի մնացել և մի անգամ է միայն սառել, այն ժամանակ հալվելուց հետո նա սկզբնական կաթը հիշեցնող հեղուկ է տալիս: Սառչելուց հետո հալված կաթի հոտը և համը քիչ է փոխվում: Խիստ շատ սառած կաթը փոխվում է թե համի վերաբերմամբ (ջրալի) և թե վերամշակման ժամանակ ել ուրիշ հատկություններ է ստանում:

Կաթը յեռ է գալիս 100 աստիճան տաքության տակ: Կաթի յեռացման ժամանակ նրան ուրիշ մթերքի վերամշակելիս փոխվում են նրա մի քանի հատկությունները:

Նորմալ կովի կաթի տեսակարար կշիռը*) տատանվում է 1,028-ից մինչև 1,034, 15 աստիճան տաքության ժամանակ: Տեսակարար կշռի միջոցով մասամբ կարելի չէ դատել, թե արդյոք անարատ է կաթը, թե՞ կեղծված:

Կաթի բաղադրությունը հատկապես փոխվում է մանրագույն կենդանի որգանիղմների ազդեցության տակ նրանց կենսունակության շնորհիվ փոփոխություն է տեղի ունենում կաթի թե քիմիական բաղադրության և թե նրա ֆիզիկական հատկությունների մեջ: Կաթը իր բաղադրությամբ հանդիսանում է շատ բարենպաստ միջա-



Նկար 2. Ձանագան ձեփի բակտերիաներ

վայր բաղադրության բակտերիաների զարգացման համար և ներանը շատ շուտ են բաղմանում նրա մեջ*):

Շատ հնչին քանակությամբ բակտերիաներ ընկնում են թարմ կթված կաթի մեջ կովի կրծից, բայց մեծ մասամբ ընկնում են անասունների բակում ողի միջից, փոշու և կեղտի հետ միասին, կերից, կաթնատներից ամանների հետ միասին, կովի մազից, կով կթողի կեղտոտ ձեռներից և այլն:

Բակտերիաները կաթի մեջ ընկնելով, սկսում են այնտեղ ապրել և հետևանքը այն է լինում, վոր կաթի բաղադրության մեջ փոփոխություն է տեղի ունենում: Այսպես, որինակ, յեթե կաթի մեջ ընկնում են կաթնաթթվային բակտերիաներ,**) այն ժամանակ նրանք առաջ են բերում կաթի մեջ կաթնաշաքարի խմորումը: Կաթի մեջ նոր բաղադրիչ մաս է յերևան գալիս — կաթնաթթուն: Նա կաթին տալիս է թթու համ: Յերբ այս թթուն շատ է կուտակվում, կաթի մաճառակը մակարդվում է:

Այսպիսի թթու կաթն արդեն վերամշակման համար համարյա անպետք է, վորովհետև նրանից լավորակ մթերք պատրաստելը դժվար է:

Կաթը մի քանի ուրիշ բակտերիաներից ավելի ևս վատ հատկություններ է ստանում (կաթի կարմիր կամ կապույտ գույնը, դառն համը, անդյուրեկան հոտը, լորձայնությունը և այլն), նրանք ավելի ևս վատ են և այն բանով, վոր նրանցից մի քանիսին, յեթե նրանք արդեն գտնվում են, շատ դժվար է վերջացնել:

Թեև կաթնաթթվային և մի քանի ուրիշ բակտերիաներ և դրոժը գործարաններում կաթի վերամշակման ժամանակ գործ են ածվում այս կամ այն մթերքը ստանալու համար (պանիրներ, կազեին, կարագի մի քի քանի տեսակներ), բայց նրանց ներկայությունը դեռ ևս վերամշակման չգնացած կաթի (նոր կթած) մեջ շատ վնասակար և վոշ ցանկալի չէ: Այդպիսի կաթը կարող է անցանկալի հատկություններ ստանալ և կարող է կաթի մոտակարարը չընդունել:

Թարմ կաթի մեջ ընկնող աղբի կամ կեղտի ամեն մի կրտորը մտցնում է հաղարավոր բակտերիաներ, վորոնք կարող են վոշ միայն կաթը թթվեցնել, ալլև ուրիշ պակասություն-

*) Նոր կթված կաթի 1 խ. սմ. մեջ գտել են 2-3 հազար բակտերիաներ, իսկ մի որից հետո 25 աստիճան տաքության տակ արգեն նրանք յեղել են 500 միլիոնի մոտ (նկար 2):

**) Այսպես են կոչվում նրանք այն պատճառով, վոր առաջացնում են կաթնաթթու:

*) Տեսակարար կշիռը ցույց է տալիս, թե ինչքան է կշռում 1 լիտր կաթը:

ներ—հիվանդութիւններ առաջացնել, վորոնք կաթը բոլորովին անպետք են դարձնում գործածութեան և վերամշակման համար:

Անասունների բակի և կաթնատների աշխատավորները պարտական են այս մասին հիշել, և այն մասին, վոր անասունների բակի, կենդանիների, ձեռների, ամանների, կաթնատան մաքրութեամբ կարելի չէ նորմալ, առողջարար, կայուն (յերկար ժամանակ չթթվող) կաթ ստանալ:

Կաթի բաղադրութեանը յեւ հասկալիութեանը կաթնասլութեան առանձին շնորհակալութեամբ: Կաթը կթի շրջանի սկզբում և վերջում յուր բաղադրութեամբ մի քիչ տարբերվում է նորմալ կաթից: Նույնպիսի, բայց միայն կարճատև փոփոխութիւն է տեղի ունենում կաթի մեջ և կովերի ցանկութեան (հոսում) շրջանում:

Դալը (ուզը) —կովի ծնելուց հետո առաջին օրերի կաթը նորմալ կաթից տարբերվում է չոր նյութերի և առանձնապես լուծվող սպիտակուցի (ալբումինի) բարձր պարունակութեամբ, վորը նորմալ կաթի մեջ բավական քիչ քանակութեամբ է պարունակվում: Դալի համը մի քիչ աղի յե: Գույնը —գեղնավուն-սպիտակ կամ կարմրավուն գորշագույն յե, յեռացման ժամանակ մակարդվում է: Վերամշակման համար անպետք է, վորովհետև նրանից կարագ չի հարվում, իսկ մակարդից (պանիր յեփելու ժամանակ) չի մակարդվում:

Այսպիսի հատկութիւններ ունի ծեր կովերի դալը 3—4 օր, յերկրասարդ կովերինը 6—7 օր և մինչև 14 օր սակավակաթ կովերինը: Այս օրերն անցնելուց հետո կաթը նորմալ բաղադրութիւն է ստանում: Այդ պատճառով եւ կաթի կոնստրակտացիայի պայմանագրերում սովորաբար ժամկետը վորոշող կետ է մտցվում (սովորաբար 5-ից մինչև 10 օր), վորից առաջ նորածին կովի կաթը վերամշակման համար չի ընդունվում:

Դալը իր բաղադրութեամբ հորթի կյանքի առաջին օրերում հանդիսանում է ամենալավ և անփոխարինելի սնունդը: Բացի բարձր սննդարարութիւնից, նա նպաստում է նույնպես իր ազդեցութեամբ հորթի աղիքների նախնական կղզկղանքից մաքրվելուն: Այդ պատճառով առաջին 4—5 օրվա ընթացքում նրան դալից զրկել վոչ մի դեպքում չի կարելի:

Կաթնատուութեան շրջանի վերջին, կթի պակասելու հետ միասին, փոփոխվում է նույնպես և կաթի տոկոսային բաղադրութիւնը: Առանձնապես ուժեղ կերպով շատանում է այդ ժամանակ կաթի յուղի տոկոսը, վորի ընթացքում յուղը նոր-

մալից տարբեր է դառնում: Այդպիսի յուղը զրկում է կարագին պատշաճ համից, Բացի դրանից, կաթը ստանում է նույնպես դառնաղի համ:

Կով կթողը պետք է ցամաքող կովերի կաթի համը տեսնի և դառնահամ յինելու դեպքում նրան առանձին ամանի մեջ լցնի:


Կովի ցանկութեան շրջանում (հոսում) նրա կաթը նույնպես մի քիչ փոփոխվում է իր բաղադրութեամբ (յուղի տոկոսը պակասում է և ստանում է աննորմալ համ): Այդպիսի փոփոխութիւնը սակայն տեղում է 1—2 օր:

ԿՐԾԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱԹԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Կովի կաթը առաջանում է կրծի մեջ գտնված առանձին կաթնային գեղձի մեջ: Կովի կուրծը տեղավորված է փորի հետևի մասի տակ, համարյա հետևի վտանների միջև. դրսից նա պատած է կաշվով, իսկ ներսում կազմված է յերկու իրարից անջատ, աջ և ձախ կեսերից: Յուրաքանչյուր կեսն եւ նույնպես կազմված է յերկու քառորդներից—առջևի և հետևի: Յուրաքանչյուր քառորդը վերջանում է ստինքով*)—կթով:

Այս կիսերի և քառորդների միջև յեղած սահմանը փոսերի—ախոսների ձև ունի:

Ամբողջ կուրծը և ստինքները ծածկված են բարակ կաշվով, վորի տակ գտնվում է վորևէ քանակութեամբ ճարպային հյուսվածք:



Նկար 3. Կաթնային գեղձի սխեմատիկ կազմվածքը

Կրծի կաշին (բացի ստինքներից) ծածկված է մազերով:

Կրծի ներսում ձեռներով կարելի չէ շոշափել առաձգական ամուր գնդեր, վորոնք հենց այն կաթնային դեղձն է, վորը արտադրում է կաթ:

Կուրծը մասերի բաժանելով, կարելի չէ տեսնել կաթնային գեղձի կազմութիւնը:


Կտրվածքի վրա յերևում է, վոր գեղձը կազմված է կարմրավուն դեղին կամ դեղնավուն հատիկներից, վորոնք միացուցիչ հյուսվածքով միացած են խմբերի—բլթակների: Ներսում

*) Բացի այս ստինքներից, կրծի հետևի քառորդների վրա յերբեմն լինում են նաև փոքր հավելվածներ, վորոնք կոչվում են կեղծ ստինքներ: Սովորաբար նրանց միջով կաթ չի արտադրվում:

ամեն մի հատիկ կազմված է առանձին կաթնային բջիղներից (վորոնք մեջ արտադրվում է կաթը) հավաքված խաղողի վողկույզի նման մանր խողովակներով: Այդ պատճառով ել հաճախ կաթնային գեղձը, նախձ կազմության, անվանում են վողկուզաձև: Կաթնային մանր խողովակները միանալով, կազմում են խոշոր կաթնային դուրս տանող խողովակներ, վորոնք տեղավորված են կրծի միացուցիչ հյուսվածքի մեջ: Կաթնային բջիղի պատերը ծածկված են առանձին բջիջներով, վորոնք հենց արտադրում են կաթը:

Գեղձի բլթակների և կաթնային խողովակների միջև տեղավորված են միացուցիչ և վորեն քանակությամբ ճարպային հյուսվածքները: Յեթե կրծի մեջ ճարպային հյուսվածքը շատ է, այդպիսի կուրծք ցույց է տալիս կովի վատ կաթնատվությունը: Ճարպալի կուրծք, գեղձալի կրծից տարբերվելով, կրթելուց հետո քիչ է թառամում, քիչ է փոքրանում:

Ճարպալի կրծի մեջ կաթնային գեղձը (գունդը) դժվար է շոշափվում: Այդպիսի կուրծք հաճախ լինում է կալմիկյան և կապտավուն ուկրաինական մսատու և մսատու-աշխատող ցեղերին:




Նկար 4. Կովի կաթնային գեղձը. ձախից - ցամաք կովիմը, աջից - կրու կովիմը: 1 - լարային գեղձը, 2 - յուղի կաթիմը, 3 - արյունատար անոթներ:

Ամբողջ կուրծքը ծածկված է արյան մանր անոթների խիտ ցանցով, վորոնց մի մասը սրտից բերում է թարմ, սր-ննդարար նյութերով հարուստ արյուն գեպի բջիղներին կաթնային բջիջները: Այս արյան անոթները կոչվում են զարկերակներ: Անոթների մյուս մասը, վոր կոչվում է վենաներ-

կ'դատոտ արյունը նորից գեպի սիրտն և տանում: Այս մանր վենաները միանալով, դառնում են խոշոր և լավ նկատելի յեն կաթնատու կովերի ինչպես կրծի (կաշվի տակ), այնպես ել վորովայնի վրա, կաշվի տակ:

Բացի արյան անոթներից, կրծի մեջ ճյուղավորվում են նույնպես և ուրիշ անոթներ, վորոնք կոչվում են ավշային և նույնպես սննդարար նյութեր են բերում գեպի կաթնային գեղձը:

Նյարդերը, թափանցելով կրծի մեջ ամեն ուղղությամբ, կապում են նրան գլխի և գլխավորապես մեջքի ուղեղների հետ, վորոնք կառավարում են կաթնային գեղձի ամբողջ գործունեությունը:



Նկար 5. Կաթի առաջացման գլխավոր լարերի ցանցը:

Այսպիսով կաթնային գեղձը սննդարար նյութերից, վորոնք բերվում են արյունատար և ավշային անոթների միջոցով, կաթնային բջիջներում վերամշակվելով, խսկ մասամբ ել այս բջիջների քայքայման մթերքներից, առաջանում է կաթը: Մանր կաթնային խողովակներով, վորոնք միանում և կազմում են խոշոր կաթնային խողովակներ, կաթը հոսում է

կրծի ստորին մասը, վորտեղ գտնվում են նրա հալաքման համար ավազաններ, վորոնք կոչվում են կաթնային ցիստերներ և տեղավորված են ստինքի հիմքում:

Հենց դրա մեջ հավաքվում է կաթը, վոր առաջացնում է գեղձը կթելու միջև յեղած ժամանակի ընթացքում: Այս ցիստերներին ստինքների մեջ գտնված խողովակներով էլ կաթը կթվում է:

Կրծի խողովակի ծայրում տեղավորված է կրծի մեջ կաթը պահող մկանը: Նա բացվում է միայն կրծի խողովակի մեջ կաթի ուժեղ ճնշման ժամանակ, վոր լինում է կթելու և հորթի ծծելու ժամանակ: Կաթնատու կովերի կուրծը լցվելու դեպքում կամ հաճախ ծերացած կովերի այդ մկանը կառոզ է ինքն իրան թուլանալ և այս դեպքում նույնպես կարող է կաթը հոսել (նկ. 3):

Կարևորագույն գեղձի գոյությունը, այսինքն կաթի քանակը և վորակը, վոր արտադրում է կովը, կապված է կենդանու սեռական կյանքի, նրա նյարդային համակարգության, խնամքի, կթելու յեղանակի հետ և այլն:

Կովի կաթնային գեղձերը բնութայինը նշանակված են նրա ձագերին հորթերին սննդարար նյութեր—կաթ արտադրելու համար:

Այդ պատճառով անկուտուրական ցեղերի կովերը, վորոնց հորթերը ծծում են, սովորաբար կթվում են միայն այն ժամանակ, յերբ նրանց հորթերը մայրական կաթի կարիք ունեն, 5—6 ամիս: Մարդը, վոր շահագրգռված է կովից մեծ քանակությամբ կաթ ստանալ, վաղ ժամանակամիջոցից արմատապես փոխել է կաթնային անասնապահության տեխնիկան: Նա ընտելացրեց կովերին առանց հորթի շատ ավելի յերկար ժամանակ կթվել (10—11 ամիս), քան թե կթվում եյին առաջ:

Հորթերին սկսեցին ջրել դույլերի միջից, անարատ կաթի մի մասը սկսեցին փոխարինել քաշած կաթով և խտացրած կերերով:

Առաջացրին անասունների կուտուրական ցեղեր, վորոնք շատ անգամ ավելի կաթ են տալիս, քան նրանց անկուտուրական նախորդները:

Կաթնային գեղձը սկսում է սովորաբար կաթ արտադրել մինչև կովի ծնելը*), վոր նկատելի յե կրծից, վորը ծնելու մոմենտին մոտիկ կաթից ուռչում է: Միայն առանձին կաթ-

*) Ժամանակից առաջ ծնելու դեպքում (վիժում) նույնպես կաթ է արտադրվում, բայց ավելի քիչ քանակությամբ:

նատու կովերին այնքան շատ է արտադրվում, վոր նրանց կուրծը չհիվանդանալու համար հարկ է լինում նույնիսկ կթել մինչև ծնելը:


Կաթնատու կովյան շրջանի նորմալ առողջությունը (ուրիշ կերպ նույնպես լակտացիոն է կոչվում) կովի ամեն տարի ծնելու դեպքում 300—315 որ է սահմանվում և հաճախ առաջնորդվում են կովի ծնելուց հետո նրա գուգավորության ժամանակով:

Ծնելուց յերեք ամիս հետո գուգավորված կովը կաթնատու լինելից 300 որ հետո գամաքում է և նոր ծննդից առաջ ունենում է սովորաբար ցամաքության շրջանում մոտ 2 ամիս ժամանակ:

Առաջին յերեք-չորս շաբաթը կովը համարվում է նորածին: Այդ ժամանակամիջոցներում նրա կիթը ամեն որ ավելանում է:

Յերկրորդ ամսին սովորաբար կիթը պահպանում է իր վորոշ չափը և ապա վորջան ժամանակ անցնի ծննդից հետո, վորջան մոտենա նոր ծնունդը, այնքան թույլ են աշխատում կաթնային գեղձերը և կիթը աստիճանաբար ընկնում է: Զուգավորված կովի կաթը առանձնապես ուժեղ կերպով ընկնում է հղության յերկրորդ կեսից հետո: Սովորաբար յուրաքանչյուր տարվա ծնելու դեպքում, ծնելուց յերկու ամիս առաջ, կովը դադարում է կթվելուց և սկսվում է ցամաքության շրջանը, վորի ընթացքում կաթնային գեղձը հանգստանում է և նոր եներգիա յե հավաքում ծնելուց հետո նոր աշխատանքի համար (աղյուսակ 6):

Թե ինչպես է փոփոխվում կաթի բաղադրությունը կաթնատու կովյան շրջանում, այսինքն կախված կաթնային գեղձի գործունեությունից գանազան պայմաններով:



Նկար 6. Պտուկի կտրվածքը 1) պտուկի հիմքը, 2) կաթնային ցիստերների վերվի ծայրը, 3) ցրա մերձին ծայրը, 4) մաքր ցիստերներ, 5) մեծ ցիստերներ, 6) արտատար խողովակի ծայրը

1—4 աղյուսակներում, այդ պատճառով այստեղ մենք կանգ կառնենք միայն կթի մեծության քանակական ցուցիչները վրա,

Աղյուսակ № 6

Կաթնատու- թյան ամիսը	1	2	3	4	5	6	7	8	9	10	ընդամենը
կթի % -ը տարեկան կթից	14,38	14,52	12,43	11,50	8,90	8,87	8,19	8,17	7,04	5,30	100 0/0

Կաթնային գեղձի արտադրողականությունը կախված է նաև կովի հասակից: Սկսած առաջին ծննդից աստիճանաբար բարձրանում է և հասնում է ամենամեծ բարձրություն, մի քանի կովերինը 3-4, իսկ մյուսներինը՝ 6-7 ծննդի ժամանակ: Հետո կաթնատուության վորոշ ժամանակի ընթացքում պահպանվում է այդ բարձրության վրա և դեպի ձերուծյունը սկսում է իջնել: Միջին հաշվով կաթնատու կովը կթվում է մոտ 10 ծնունդ, իսկ առանձին կաթնատուությամբ աչքի ընկնող կովերը նույն իսկ մինչև 14-15 ծնունդ:

Կովի կիթը կախված է նույնպես և ցեղից: Միջին թվով կարելի չէ համարել, վոր կաթնատու կովերը տալիս են 2½-3 հազար կիլոգրամ (լիտր) կաթ տարեկան: Մաստու և բանող մաստու կովերը՝ 500-1000 կիլոգրամ:

Կաթնատու ցեղերի կովերի տարեկան բացառիկ կիթը հասնում է մինչև 16 հազար լիտրի:

1929 թվին ԽՍՀՄ մրցանակատար կարմիր-գերմանական ցեղի «Մրիա» կովը տարեկան տվեց 10136 կիլոգրամ կաթ:

Առանձին կովերի որական կիթը նույնպես տատանվում է հասնելով մի քանի կովերինը 10-15, մյուսներինը 25-30 լիտրի: Ամենաբարձր որական կիթը ԽՍՀՄ-ում 1930 թվին 61,5 կիլոգրամ տվեց «Ակկերմեն մեխտոպուլչինայում» ցեղատեսակության կարմիր-գերմանական ցեղի «Մրիա» կովը:

Կաթնային գեղձի արտադրողականությունը կախումն ունի նաև կերից, խնամքից, կովի պահելուց: Յերը այս պայմանները նորմալ են կովի համար, նշանակում է և կաթնային գեղձն էլ բավականաչափ արյան միջոցով կմատակարարվի անհրաժար նյութերով: Նշանակում է նա բավականաչափ նյութ կունենա կաթ արտադրելու համար:

Կուրծը կարող է իր մեջ տեղավորել այնքան կաթ, ինչքան մի անդամվա ընթացքում է կթվում: Մի անդամվա կթի ամենամեծ մասը կուրծը արտադրում է հենց կթելու միջոցին: Այդ պատճառով պարզ է, վոր հմուտ կթելով կարելի չէ

կաթնային գեղձի գործունեությունը բարձրացնել, անշնորհ և անուշադիր կթելով վոր միայն պակասեցնել, այլ և կարելի չէ բոլորովին դադարեցնել:

Կովը պետք է կթել հանդիստ կերպով, առանց նրա հետ կուպիտ վարվելու վորովհետև այս նրան անհանգստացնում է և այն ժամանակ դժվար է նրան մաքուր կթել: Յեթե կուրծը մաքուր չկթվի, հետագայում կաթով լցվելուց կհիվանդանա (կբորբոքվի):

Բարձր կիթ ստանալը ապահովվում է վոր միայն լավ կաթնատու կով ձեռք բերելու հնարավորությամբ, այլ և հարկավոր է նրան կանոնավոր կթել, կանոնավոր խնամել, պահել և կերակրել:

Կրծի ճիվաճղություն.— լավ, առողջարար, կայուն կաթ սովորաբար ստացվում է առողջ կովերից: Վարակիչ հիվանդությամբ հիվանդ կովերից ստացված կաթը յերբեմն նույնպես լինում է հիվանդադին և չի կարելի նրան իբրև սնունդ գործածել, վորովհետև դրանից կարող են մարդիկ էլ հիվանդանալ:

Այն հիվանդությունները, վորոնց ժամանակ կաթը չի կարելի գործածել, սիրիական ախտը և կատաղությունն են:

Սովորաբար կովի և կաթնային գեղձի հիվանդության ժամանակ կիթը ընկնում է: Կթված կովերին և նրանց կրծին խնամքով հետևելը կով կթողների և անասնապահների կողմից առանձնապես անհրաժեշտ է:

Թե կուրծի և թե կենդանու այլ հիվանդության մասին անհրաժեշտ է իսկույն և յեթ հաղորդել անասնաբուժական պետոնալին:

Ամենահաճախ կրծի հիվանդություններն են նրա բորբոքումը (կոշտացումը) զանազան պատճառներից, թոքախտ, ծաղիկ, ստինքների վերքը, ստինքների խողովակի նեղանալը:

Կրծի բորբոքման դեպքում, վոր լինում է մրսելուց, քերթվելուց, վիրավորվելուց, նրան կեղտոտ պահելուց և այլն, կուրծը սովորաբար տաք, հաճախ ուռած է լինում: Մի քանի ժամանակից հետո տաքություն իջնում է մինչև նորմալ և նա պնդանում է: Բորբոքված կրծից արտադրվում է ջրալի կաթ, կտորներով, հատկապես առաջին ցայտումները:

Կաթնային գեղձի թորախտով հիվանդանալու դեպքում կրծի և ստինքի մեջ կարելի չէ շոշափել պնդություն, հանգույցներ: Սովորաբար հիվանդության դեպքում տաքության աստիճանի բարձրացում չի նկատվում: Թոքախտավոր կրծից արտադրված կաթը ավելի հեղուկ, ջրալի չէ, հորթերին և մարդ-

կանց համար իբրև անունդ, նույնպես և վերամշակման համար գործածել չի կարելի, վորովհետև այդպիսի կաթի մեջ յեղած թոքախտի դրգուիչ բաղադրիւնները կարող են թոքախտով վարակել մարդկանց և հորթերին:

Կաթի անառողջարար, փչացած, լորձային, դառն, գարշահոտ, կարմիր կամ կապույտ գույնը հաճախ լինում է կրծի հիվանդութեան, նրա մեջ վնասակար բաղադրիւնների կուտակման դեպքում:

ԿՈՎԵՐԻՆ ԿԹԵԼԸ

Կթելու նպատակը միայն կաթը կաթնային գեղձից դատարկելը չէ: Կթելու ժամանակ կով կթողը պետք է նույնպես կթի առողջարար, մաքուր, կայուն կաթ: Նա կովը այնպես պիտի կթի, վոր վոչ միայն կուրծը չփչացնի և կովին վատ սովորութիւններ չսորվեցնի, այլ կանոնավոր կթելով, կովի կիթը և կաթի յուզալիութիւնը բարձրացնի:

Ինչպես արդեն վերևում ասված է, մոտավորապես կաթի միայն կեսն է արտադրվում կթելուց մինչև կթել յեղած միջոցներին: Մնացած կաթը արտադրվում է հենց կթելու ժամանակ: Այդ պահին կաթնային գեղձի հաճելի գրգռման ազդեցութեան տակ կթելու գործողութիւնները շնորհիւ տեղի յե ունենում արյան առանձնապես ուժեղ հոսանք գեպի կուրծը (գեղձը), վորի հետեւանքով ել տեղի յե ունենում կաթի ուժեղ արտադրութիւնը գեղձից: Կթելը միայն այն ժամանակ կարող է առաջացնել արյան հոսանք և կաթի արտադրութիւնը, յերբ նա լինում է համաչափ, կովին ցավ և անհանգստութիւն չի պատճառում և զբաղնով հիշեցնում է հորթի ծծելը:

Ամեն մի կռալիտ վարմունք, ցավ, կրծի արագ սառեցումը, աղմուկը, կթելու յեղանակի փոփոխութիւնը կարող են հակառակ յերեւոյթ առաջ բերել, այսինքն այլան հոսանքը գեպի գեղձը կզաղարի, կզաղարի նույնպես և կաթի արտադրութիւնը: Այն ժամանակ ասում են, վոր կովը կաթը բռնում է: Այսպիսի յերեւոյթը առանձնապես հաճախ նկատվում է առատ կաթ տվող և ջղային կովերի վրա: Կաթը «բռնելու» համար չի կարելի կովին մեղադրել: Այդ շատ հաճախ տեղի յե ունենում վոչ նրա հանցանքով, այլ սպասարկող պերսոնալի, այսինքն կովը կթողների հանցանքով:

Կիթը հարկավոր է կատարել միշտ միևնույն ժամանակին անասունների բախում սահմանված որակարգի համաձայն: Կո-

վերը շատ շուտ են ընտելանում վորոշ կարգի, այդ պատճառով անժամանակ կիթը (ուշացումը կամ ժամանակից առաջ) առաջ է բերում նրա մեջ անհանգստութիւն և կթի հնարավոր պակասեցում: Բացի դրանից, անժամանակ կիթը անասունների բախի ամբողջ կարգն ել խանգարում է:

Ամենից լավ է իբրև կանոն ընդունել կովը կթել որվա ընթացքում հավասար ժամանակամիջոցներից հետո, այսինքն յերեք անգամ կթելու դեպքում 8 ժամից հետո, իսկ յերկու անգամվա դեպքում 12 ժամից հետո: Կթերի միջև յեղած հավասար ժամանակամիջոցները ապահովում են կաթնային գեղձի համաչափ աշխատանքը, համաչափ կաթի քանակը և ամեն կթի կաթի միատեսակ բաղադրութիւնը:

Կթելու ժամանակ հատկապես ուշադիր կերպով պետք է հետեւել կով կթողի շորի մաքրութեան վրա, կովկթի, կրծի և ստինքի մաքրութեան վրա: Կաթի թշնամի բաղադրիւնները այստեղից ամենահեշտ կերպով ընկնում են թարմ կթված կաթի մեջ: Տաք, թարմ կթված կաթի մեջ բավական քանակութեամբ սնունդ գտնելով, նրանք արագ կերպով բողբոջանում են և փչացնում կաթը: Փչացած կաթը անտեսութեան վնաս է, վորովհետեւ հաճախ նրան վոչ սննդի, վոչ ել վերամշակման համար թույլ տալ հնարավոր չէ:

Կովկիթը ուրիշ պետքերի համար, ինչպես՝ կերակուր պատրաստելու, անասուն ջրելու, լվացելի, հորթերին կերակրելու համար և այլն, չպիտի գործածվի, վորովհետև նա կեղտոտվում է վնասակար բաղադրիւններով, վորոնք փչացնում են կաթը:

Միևնույնն է և հազուստի և սրբիչների վերաբերմամբ: Յեթե կով կթողը անասունների բախում ուրիշ աշխատանքներ ել է կատարում, ինչպես՝ անասուններին կերակրել, մաքրել, շենքը մաքրել, այն ժամանակ այդ ուրիշ աշխատանքների համար նա պետք է ստանա ուրիշ հատուկ հրգուստ:

Հատկապես ուշադրութեամբ պետք է հետեւել ստինքների և կրծի մաշկային ծածկոցի մաքրութեան: Կովի պառկած ժամանակ կուրծը հաճախ կեղտի մեջ է ընկնում, փոշին կրծից և ստինքներից ընկնում է կաթի մեջ և փչացնում նրա վորակը: Այդ պատճառով կթելուց անմիջապես առաջ կաթը և ստինքները, վորովայնի և հետևի վտանների կրծին մոտիկ մասերը տաք ջրով պետք է լավ լվանալ, ցեխը և փոշին հեռացնելու համար: Հատկապես ուշադիր կերպով պետք է լվանալ ստինքներն ու կուրծը: Հետո բոլոր լվացած մասը մաքուր

սրբել կակուզ սրբիչով: Միայն դրանից հետո կարելի չե անցնել կթելուն:

Սոցսեկտորի տնտեսություններում կաթնատու կովերի նախրի արագ աճման շնորհիվ կովերի մի մասը անասունների տաք բակերի պակասության պատճառով ժամանակավորապես տեղավորված ե տաքացրած կամ նույն իսկ ցուրտ գոմերում և բակերում: Այդպիսի կովերի կուրծքը լվանալը վտանգավոր ե, վորովհետև նրան կարելի չե մրսեցնել: Կուրծք կեղտից մաքրելու համար, այս դեպքում պետք ե սահմանափակվել խնամքով չոր կամ քիչ խոնավ սրբիչով սրբելով, բրդի և կաշվի վրայից փոշին և կեղտը հեռացնելու համար:

Նախ քան կով կթելը կթողը պարտական ե ձեռները սապոնով լվանալ անասունների բակում գտնված լվացարանում:

Կով կթողը պետք ե պարբերաբար բժշկական քննության յենթարկվի: Վորեն վարակիչ հիվանդությամբ հիվանդանալու դեպքում նա իսկույն պիտի հեռացվի աշխատանքից, մինչև լիակատար առողջանալը: Վարակիչ հիվանդությունը կաթի միջոցով կով կթողից կարող ե անցնել կաթը գործածող մարդկանց:


Կով կթողի միջոցով վորեն հիվանդություն մեկ կովից մյուսը փոխվելուց խուսափելու համար, հարկավոր ե հիվանդ կովերի համար առանձին կթողներ նշանակել: Յեթե վորեն պատճառով այդ չի կարելի անել և միևնույն մարդը պետք ե կթե թե առողջ և թե հիվանդ կովերին, առաջին հերթին պետք ե կթվեն առողջ և ապա միայն հիվանդ կովերը:

Կաթը կթելու ամեն մի գործողությունը կայանում ե ստինքները և կրծի մասը սեղմելու և դուրս հանելու մեջ, վորի հետևանքով կաթը կաթնային ցիստերնից լցվում ե ստինքի խողովակը, ապա արտատար խողովակով դեպի դուրս: Հիշեցնենք կով կթողներին, վոր գեղձից արտադրված կաթը խողովակներով հավաքվում ե կաթնային ցիստերների և մասամբ ել ստինքի խողովակում, վորի դուրս տանող անցքը փակվում ե փակող մկանսով: Կաթի հոսանքի աղդեցություն և ստինքի խողովակի լայնացման աղդեցության տակ փակվող մկանը նույնպես թուլանում ե և առաջացած անցքի միջով կաթը դուրս ե թափվում:

Կաթի ճնշումը ստինքի մեջ թուլանալուց հետո, մկանները կրճատվելով, դրսի անցքը փակվում են և կաթի արտադրությունը դադարում ե:

Կանոնավոր կթելը պահանջում ե ձեռների վորոշ դիրք կթի ժամանակ և նա կարող ե ճիշտ կատարվել միայն այն ժամանակ, յեթե կով կթողը լավ ե յուրացրել և պարզ ե պատկերացնում իրան ինչպես ամբողջ գործողությունը, նույնպես ել կթելու տռանձին մոմենտները: Կթելու մի քանի ձևեր կան: Այստեղ մենք կնկարագրենք միայն այն ձևը, վորը ներկայումս (իհարկե, նրա կանոնավոր կատարման դեպքում) համարվում ե ամենանպատակահարմարը: Կթելու այդ ձևը կոչվում ե բուռնցքով կթել:

Բռուցցով կթելը: Ստինքը բռնում են բաց բուռնցքով այնպես, վոր նրա ստորին մասը համարյա թե ստինքի ծայրի հետ միևնույն բարձրության վրա լինի: Հետո ստինքի հիմքը սեղմում են բթամատով (1-ին) և ցուցամատով (2-որդ): Հենց դրանով ստինքի խողովակի մեջ գտնված կաթը ստինքի մեջ մնացած կաթից բաժանվում ե, ապա ցուցամատի (2-րդ) միջին մասի (3-րդ), մատնամատի (4-րդ) և ճկութի (5-րդ) հաջորդական սեղմումներով, կաթը ստինքի խողովակից և դրսի անցքից դուրս ե մղվում տակը դրած կով կրթի մեջ:



Նկար 1. 1) Այ ձեռի գի քը պակը բռնելը, 2) Վտ. գի բռնելը, 3) սաստը հետևողականորեն սեղմելը, 4) կաթի հոսանքը դուրս մղելը

Կթելու այս ձևի միջոցին ստինքի ծայրը բուռնցքի տակից դուրս պիտի ընկնի այնքան, վոր հինգերորդ մատը (ճը-

կուլթը) արտադրվող կաթով չթրջվի: Յեթե ստինքի ծայրը բռունցքի տակից ավելի լերկար դուրս թողնեք, այն ժամանակ նրա արտաքին ձևի յերկարացման և փոփոխության կհանգեցնի (լայնանում և դեպի գած): Այդպիսի յերկարացած դեպի ցած լայնացած ստինքը կով կթողից պահանջում և շատ ջանք, ժամանակ և հմտութուն կթելու ձամար:

Կթելու այսպիսի յեղանակով ստինքը բոլորովին չի ցրնցվում, չի ձգվում, չի քերթվում, — ինչպես այդ լինում և ուրիշ յեղանակներով կթելու ժամանակ: Ստինքի կաշին ել չի պատռվում: Կովի համար այս յեղանակը ստեղծում և հաճելի դեպքումնք, ինչպես հորթը ծծելու ժամանակ: Կթել հարկավոր և չոր ձեռներով: Ձեռները ջրով, կաթով կամ ուրիշ այլ բանով թրջել չի թույլատրվում, վորովհետեւ այդ դեպքում ձեռքը սայթաքում և, վորով կթելը բարդանում և, իսկ ձեռներից թրջած հեղուկի հետ միասին կաթի մեջ կհոսի կեղտը:

Բռունցքով կիթը կատարում են յերկու ձեռքերով միաժամանակ: Յերբ մի բռունցքը սեղմվում և, մյուսով այդ ժամանակ բռնում են ստինքը: Լավ արագ կթելիս կաթը հաջորդաբար միաժամանակ կթվող ստինքներից այնպես և հոսում, վոր կովկիթի մեջ թափվող կաթի հոսանքի ձայնով դժվար և լինում տարբերել այն մոմենտները, թե յերբ և կթողը ստինքը փոխեփոխ բռնում:

Կթել սկսելիս հարկավոր և յուրաքանչյուր ստինքից կաթի առաջին շիթը կթել առանձին ամանի մեջ, վորովհետև նա կեղտոտված և ստինքի խողովակի մեջ հավաքված բակտերիաներով: Յերկրորդ շիթը սովորաբար կթվում և ձեռքի ափի վրա և նրանով կթողը վորոշում և, նորմալ և արդյոք կաթը, արդյոք կտորներ չկան, գույնը, համր:

Կթելը պետք և սկսել առջևի ստինքներից, միաժամանակ դատարկելով նրանց: Յերբ կրծի առջևի քառորդները դատարկված կլինեն, նրանք ծավալով կփոքրանան, իսկ հետվի ստինքները դրանից մի քիչ առաջ կձգվեն: Դրանով կթեթեվանա նրանց դատարկելը:


Կթելը պետք և սկսել դանդաղ, աստիճանաբար, հետդետե աշխատանքը արագացնել, լավ և առանց դադարի կուրծքը դատարկել:

Կթելու ժամանակ դադարը կովին դրդում և և կարող և հասցնել կովի «կաթը բռնելուն»: Յերկու ստինքներից պարբերաբար կովկիթը թափվող կաթի հոսանքի անընդհատ ձայ-

նը և առատ փրփուրը կովկթում — արագ, լավ կթելու ցուցանիշներն են:

Կաթնային դեղձում արտադրված կաթն իր ծանրության շնորհիվ պետք և կաթնային խողովակներով հոսեր կաթնային ցիտներների և ստինքի անցքի մեջ, սակայն կաթի մի մասը մնում և կրծի խողովակներում, վորովհետեւ արյունով լցվելուց ուռչող արյան անոթները սեղմում են կաթնային խողովակները և արգելում են կաթի ազատ հոսանքը դեպի ստինքները: Այս բռնված կաթը սովորաբար յուղով ամենահարուստն և նրան, իբրեւ ամենարժեքավորը (տես աղյուսակ 4), անհրաժեշտ և նույնպես կրծից դուրս բերել: Դրա համար, նույնպես և գեղձի գրգռման համար, վորպեսզի ուժեղացնենք դեպի նա արյան հոսանքը և վորպեսզի նա ավելի շատ կաթ արտադրե, կիրառվում և մասսաժը կամ կրծի մերսումը հետադայում կթել-վերջացնելով:

Կեծի մասսաժը կայանում և նրանում, վոր իսկույն և լեթ կթելը վերջացնելուց հետո (անկախ կթելու յեղանակից), կովից չհեռանալով մերսում և տրորում են ամբողջ կուրծքը և թեթեւ կերպով քաշում են ստինքից:



Նկար 8. Կուրծի առջևի քառորդի մասամբ




Նկար 9. Ձախ ձեռնի ու մատների դիրքը կուրծի հետվի աջ մասը բույլ բողբելիս

Մասսաժը պետք և ըստ հնարավորության արագ կատարել, վորպեսզի կովին չհոգնեցնել, ցավ և անհանդստութուն չպատճառել: Մասսաժ անում են ամբողջ կուրծք, այսինքն նրա բոլոր չորս բլթակները ամեն կողմից: Կատարում և նա, վորը կթում և տվյալ կովին: Կթելու ժամանակ կթողի փոփվելը կովին ջղայնացնում և:

կրծի մասսաժի մի քանի յեղանակներ գոյութիւն ունեն։ Այստեղ մենք կնկատենք ամենահասարակը, փորը նուշնպես տալիս եւ լավ հետեւմանքներ։



Նկար 10. Ձեռքի 2-րդ դիրքը, ձախից եւ աջից կուրծի կեսը



Նկար 11. Կուրծի ձախ կեսի քրոնից 2-րդ յեղանակի սկզբում

Սկզբում կուրծքը խնամքով մերսում են (տրորում)։ Դրա համար յերկու ձեռքերով վերցնում են կրծի մեկ կեսը, հետո ձեռքերով, ափերը կրծին ամուր սեղմելով, ափերով շրջանաձեւ շարժումներ են կատարում։ Պետք է հետեւել փոր մերսման (տրորման) յենթարկվեն կրծի այդ ժամանակ մերսվող կիսի յերկու քառորդներն եւ ամեն կողմերից։ Կրծի մեկ կեսը վերջացնելուց հետո, նուշնը կատարում են և մյուսի հետ։ Մասսաժի կարելի չէ յենթարկել նաեւ կրծի յուրաքանչյուր քառորդը առանձին (տես նկ. 8)



Նկար 12. Առջևի յերկու պտուկները բարձրացրած եւ յեկ կարգի ժամանակով սեղմված են իրանին

տալն եւ կաթնային գեղձի մեջ հաճելի զրգիռ առաջացնել և զրանով նպաստել նրա գործունեութեան ուժեղացման։ Բացի դրանից, կրծի մերսումը և տրորումը նպաստում է թանձր կաթի ավելի արագ կերպով (վերջին բաժինների) վուրապատույտ կաթնային խողովակներով ստինքի մեջ անցնելուն։ Մերսման ժամանակ կաթը, կարծես ամենամանր խողովակներից դուրս եւ մղվում դեպի ստինքը։

Այս առաջին միջոցի տեւողութիւնը կրծի յուրաքանչյուր կեսերի համար լինում է մոտ $1\frac{1}{2}$ րոպե։

Ապա (2-րդ միջոց) կրծի յուրաքանչյուր կեսն առանձին առանձին (առաջ աջը, հետո ձախը), յերկու ձեռքերով բռնում են ըստ հնարավորութեան ավելի բարձր և կենդանու վորովայնի ավելի մոտիկ, ինչպես հետեւից (տես նկ. 9), այնպես եւ առջևից, հետո կրծի վրա սեղմելով ձեռքերով տանում են դեպի ցած ստինքները։ (Տես նկ. 10 և 11)։


Այս միջոցը կրծի յուրաքանչյուր կեսի վրա կրկնվում է 4—5 անգամ, ամեն մի անգամից հետո կովը մինչև վերջը կրթելով։ Այս դեպքում կաթնային մանր խողովակներում մնացած կաթը քշվում է դեպի ստինքները։

Դրանից հետո, կրծի ամեն մի քառորդը բաց ձեռքերով առանձին առանձին բռնելով, թեթեւ դարկով բարձրացնում են նրանց դեպի կովի փորը, սեղմելով այդ ժամանակ։ Մի քանի ժամանակ այդպիսի դրութեան մեջ բռնում և ապա բաց են թողնում ցած։ Այս կրկնվում է կրծի ամեն մի քառորդի տակ յերեք-յերեք անգամ։

Ամենից հարմար է առաջ առջևի և ապա հետևի քառորդները բռնել։ Այս դեպքում գեղձի խողովակներում մնացած բոլոր կաթը դեպի ստինքը կհոսի և դուրս կմղվի։ Յեթե կովը արդեն առաջ հաճախ կթված է յեղել, այն ժամանակ այս միջոցը գործադրվելուց հետո ստինքներից միայն մի քանի շիթ կաթ դուրս կգա։

Սրանից հետո ամբողջ կուրծքը սրբիչով չոր սրբում են և դրանով կովի կթելը վերջացնում են։

Ամացող կովերի կթելը։ Մի քանի կովեր կթելու ժամանակ աքացելու վատ սովորութիւններ ունեն։ Այս սովորութիւնը վատ է նրանով, փոր կով կթողը կթի ժամանակ կարող է վիրավորվել, կաթը թափել։ Բացի դրանից, այս դեպքում կարող է ցելս, փոշի ընկնել կաթի մեջ, իսկ նրանց հետ եւ բակտերիաներ։



Նկար 13. Ամացի տվող կովի վտակ կապելը կթելիս

Ամենից առաջ պետք է պարզել այն պատճառները, վորոնք կովին ստիպում են կթողին հեռացնել: Հաճախ իբրեւ պատճառ հանդիսանում են կրծի կամ ստինքի հիվանդութիւնները (ճեղքվածքներ, վերքեր և այլն), վորոնք կովին ցավ են պատճառում: Կատ, հովին անհանգստացնող կէթը և վերջապես այն սովորութիւնը, վորը յերեւման գալուց անմիջապես հետո կովը չի մոռացել:

Յեթե այդ արատի պատճառները կրծի կամ ստինքների հիվանդութիւնն են, պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնել բժշկութեան համար: Իսկ յեթե հիվանդութեան նշաններ չկան, հարկավոր է պատճառը փնտրել կթողի մեջ և փոխել նրան: Իսկ յեթե դրանից հետո լեւ կովը շարունակե աքացի տալ, այն ժամանակ հարկ է լինում կամ կթելու ժամանակ նրա հետեւի վտրքերը կապել, կամ թե չէ առջևի մեկ վտրքաբձր պահել, ինչպես այդ ցույց է արված 13-րդ նկարում:

Կովի վոտները կապելու համար պետք է գործածել կամ հաստ թուկ կամ հատուկ կաշվեկապ: Բարակ պաշտնը, ինչպես և լարը դրա համար անպետք են, վորովհետեւ կարող են վոտների կաշին կտրել:

Կրելու ժամանակ պոչի կապելը կաթը պոչից կեղտոտվելուց խուսափելու համար սի քանիսը խորհուրդ են տալիս պոչի փնջիկը կտրել, ուրիշները՝ կապել, վոմանք ել՝ մաքուր լվանալ կթելուց առաջ:

Սորհուրդ տալ պոչը կտրել, չի կարելի, վորովհետեւ բացի այն, վոր դա կովին վորոշ չափով անշնորհացնում է, նրան նաեւ մեծաւ է տալիս: Ամառը կովը դժվարանում է ճանճերը քշել, իսկ ձմեռը մաղերով չծածկված պոչի ծալքը կարող է ցրտատար լինել:

Ավելի լավ է կթելու ժամանակ պոչը կամ առատադից իջնող յերկար թելին կամ իր վտրքին կապել: Կաթի մաքրութեան տեսակետից լավ հետեւանքներ են տալիս նույնպես և կթելուց առաջ պոչը առանձին ամանում (վոչ մի դեպքում կովկթում) լվանալ:

Նորածին կովերի կրելը: Ծնելուց հետո հոգնած կովին անմիջապես չի կարելի կթել: Հարկավոր է նրան 2—3—4 ժամ հանգստութիւն տալ և միայն դրանից հետո, բոլոր արյունով կեղտոտված տեղերը լվանալով, կարելի յե կթել: Ծնելուց անմիջապես հետո կովին կթելը առաջ է բերում անկանոն արյան շրջանառութիւն, վորի հետեւանքը կարող է լինել շերմախար:

Ինչպես արդեն վերեւում ասվեց, կթելու ժամանակ առանձնապես յեռանդուն կերպով է արտադրվում կաթը, վորովհետեւ այդ ժամանակ տեղի յե ունենում կաթնային գեղձի նյարդերի գրգռում, վորից նա սկսում է ուժեղ կերպով աշխատել և կաթ արտադրել: Այդ պատճառով առանձնապես կարեւոր է կաթնային գեղձին նորածնութիւնից այդպիսի լարում տալ:

Դրան կարելի յե հասնել նորածին կովին ավելի մաքուր կթելով: Գեղձը ծնելուց հետո լավ վարժվելու դեպքում, միշտ ավելի շատ կաթ է արտադրում, քան այն գեղձը, վորն այդպիսի վարժութիւն չի ստացել: Այդ պատճառով նորածին կովին անհրաժեշտ է, նայած նրա արդյունավետութեան, 4-ից մինչև 6 անգամ կթել: 7—10 որից հետո կարելի յե աստիճանաբար անցնել սովորական յերեք անգամ կթելուն:

Այն դեպքում, յերբ կովը առաջ հորթով է կթվել, իսկ նոր ծնելուց հետո վորոշված է առանց հորթի կթել, դեպի կովը հարկավոր է ունենալ ամենաուշագիւր վերաբերմունք, ավելի համբերատար, կթելու ձեւերի առանձնակի մանրակրկիտ կիրառում:

Դրա համար հարկավոր է, ամենից առաջ, ծնելուց հետո իսկույն հորթին հեռացնել կովից, առանց թույլ տալու նրան հոտոտելու և լիզելու: Սովորական ժամանակ, այսինքն ծնելուց 2—4 ժամ հետո, սկսում են կթել: Յեթե կենդանին ըսկսում է անհանգստանալ, նրան հարկավոր է փաղաքշել, կուրծը, ստինքները շոյել: Ծեծով և կոպիտ վարմունքով կարելի յե այն դեպքում նորածին կովին բոլորովին փչացնել:

Ավելի հեշտ է առանց հորթի կթել սովորեցնել առաջին ծին կովերին, դրա համար հարկավոր է դեռ ևս ծնելուց մի վորոշ ժամանակ առաջ կթելու սովորացնել և ընտելացնել նրանց կթողին:

Դրա համար կթողը պետք է կովկթով նստի կովի մոտ, լվանա նրա ստինքները գոլ ջրով, կուրծը և ստինքները շոյի, սրբի կուրծը: Իբրեւ կանոն, կովի ծնելու նախորդակին կթել խորհուրդ չի արվում, վորովհետեւ այդ հանգամանքը արյան ուժեղ հոսանք է առաջացնում դեպի կուրծը:

Կուրծը կաթից չափազանց ուռչելու դեպքում, յերբ վտանգ կա, վոր կուրծը կարող է բորբոքվել, հարկ է լինում զիմեղ կուրծը մի քիչ պարպելու:

Հատկապես հարկավոր է խնամքով պահպանել նորածին կովի կուրծը կեղտից, ցրտից և միջանցիկ քամուց, վորովհե-

տե՛վ կարող ե անաջին դեպքում վարակվել կուրծը, իսկ մը-
նացան դեպքերում մերսեր:

Հղի կովերի ցամաֆեցնելը: Ծնելուց մի քանի ժամանակ
առաջ կովը պետք ե ցամաքի, այսինքն դադարի կթվելուց:

Դրա համար անհրաժեշտ ե, վոր կաթնային գեղձը կա-
րողանա հանգստանալ և ծնելուց հետո նոր յեռանդով աշխա-
տեր: Կաթնային գեղձի հանգստի—ցամաքության սովորական
տե՛վողությունը շարունակվում ե 1—2 ամիս, կախված կովի
արտադրողականությունից, գիրությունից, հասակից: Ավելի
լղար և յերիտասարդ կովերի (յեթե նրանք շատ վաղ հա-
սակումն են ծնել) ցամաքության տե՛վողությունը հարկա-
վոր ե յերկարացնել:

Ցամաքող կովերին յերեք անգամ կթելուց անց-
նում են յերկու անգամի, իսկ հետո նայած կթին, 4—7
որից հետո մի անգամի: Հետագայում նրանց կթում են որրնդ-
մեջ և յերբ կթը մեկ լիտրից ել պակասում ե, կարելի յե
համարձակապես դադարեցնել: Սովորաբար կովերին սկսում
են ցամաքեցնել այն ժամանակ, յերբ կովը որական տալիս ե
3—4 լիտր և վա շարունակվում ե մինչև մոտ յերկու շաբաթ:

Կովերին պետք ե աստիճանաբար ցամաքեցնել, վորով-
հետե՛վ նրանց կթելը հանկարծակի դադարեցնելը կամ բա-
վականաչափ առատ կաթ սովող կովերին շատ շուտ ցամա-
քացնելը կարող ե կրծի հիվանդության հասցնել:

Հիվանդոտ կուրծ ունեցող կովերի կրուսը.— Յերբ կովի
կուրծը ցավում ե, յերբ կաթի մեջ կարծր մասնիկներ են զրո-
նվում (բյուրեղներ, ավազի մանր կտորներ, վորոնք կոչվում
են կաթնաքարեր), յերբ պտուկի միջանցքը նեղցել ե կամ
պտուկը զրսից վերքեր ունի, այդ դեպքում կթելը սաստիկ
գա՛վ ե պատճառում կովին և անհանգստացնում:

Կաթ կթելու համար, վորն այս դեպքում ևս ամբողջովին
պետք ե կթել, գործածվում են կթելու խողովակներ—կաթ-
նահան ձողեր, վորոնք մետաղից կամ վոսկորից են պատրաս-
տվում:

Կաթնահան ձողը գործադրվում ե անասնաբուժի թույլտվու-
թյամբ և միայն այն դեպքում, յերբ առանց նրան անհնար ե
կթել:

Յեթե կաթնահան ձողը հաճախ գործածվի, այդ դեպքում
պտկի միջանցքի ծայրի փակող մկանը կթուլանա, իսկ զրա
հետևանքն այն ե լինում, վոր կովի կուրծը կաթով լեցուն յե
ղած ժամանակ ինքն իրեն կարող ե հոսել:

Կաթնահան ձողը պտկի միջանցքի մեջ պետք ե զգուշու-
թյամբ և պտտեցնելով (վոչ թե հրելով) մտցնել: Զողը մա-
քուր պետք ե պահել, Կեղտոտ ձողը հեշտությամբ կուրծի բոր-
բորում ե առաջ բերում: Մի քանի կովեր
կաթնահան ձողով կթելիս, ձողը խնամքով
պետք ե մաքրել և հականխել կամ թեյուրա-
քանչյուր կով կթելուց հետո յեռացնել: Յե-
թե հնարավորություն կա, ավելի լավ ե մի
քանի ձող ունենալ և ամեն մի կովի հա-
մար առանձին ձող գործածել:

Յեթե կովն առողջ կուրծ ունի, ապա
կաթնահան ձող չպետք ե գործածել:

Հատուկ ուշադրությամբ պետք ե հե-
տե՛նել, վոր հիվանդ կուրծից կթված կաթը
լավ վորակ ունենա, իսկ յեթե նա լավը չի,
իեցնել առանձին ամանի մեջ:

Կրելու կանոններ*) 1. Կթն սկսելուց
1 ժամ առաջ գոմի բոլոր կողմնակի աշխա-
տանքները պետք ե դադարեցվեն և նրանք,
ովքեր չեն մասնակցում կթելուն, պետք ե
հեռացվեն մինչև վոր կթն ամբողջովին
վերջանա:

2. Կթը պետք ե տեղի ունենա ճիշտ
նշանակված ժամերին և կովերին կթելու հեր-
թականությունը միշտ պետք ե պահպանել:

3. Աշխատանքի դուրս գալու ժամանակ կթող կանայք
մաքուր խալաթ պետք ե հագնեն, գլխներին մաքուր շոր կա-
պեն և իրենց հետ ունենան մաքուր և չոր սրբիչներ:

4. Կթելու ամանները (կթոցներ, կուրծեր լվանալու դույ-
լեր, բիդոններ և այլն) անպայման մաքուր պետք ե լինեն:


ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.— Կթելու ամաններն ուրիշ վոչ սի բա-
նի համար չպետք ե գործածվեն:

5. Կթելու ժամանակ չպետք ե ծխել, սերմ չովել, աղ-
մուկ հանել, խոսել, յերգել, նստարաններ, ամաններ շարտել:

6. Կթելուց հենց անմիապես առաջ, գոմում, կթողներն
իրենց ձեռքերն ոճառով պետք ե լվանան:

7. Հիվանդոտ կուրծով (բարակացավով վարակված, բոր-

*) Այս կանոնները մշակվել են Ուրուսկայի կաթնատնտեսական կայանի մի
խումբ մասնագետներից կողմից և հենց այնտեղ ել գործադրվում ե:



Նկար 14. Կթի խողովակ
(կատետեր)

բորժան, վերքոտ, խոցոտ և այլն) ամեն մի կողմ կթելուց հետո, ձեռքերն անպայման ոճառով լվանալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե կթողներն իրենց տրամադրության տակն ունեն թե առողջ և թե հիվանդ կովեր, ապա առաջին հերթին պետք է կթեն առողջներին, իսկ ամենավերջը—հիվանդներին:

8. Կթողը փաղաքշանքով և միևնույն ժամանակ խիստ (բայց վոչ կոպտաբար) պետք է վերաբերվի կովին հետ. յերբեք կովին չծեծել և չվախեցնել:

9. Կթելուց առաջ պտուղած կովին պետք է փոքրի հանել, փորպեստի նա կարողանա կույել և միգել, փորովհետև յեթե նա կթվելու ժամանակ հոգա իր բնական կարիքները, կաթը կարող է աղտոտվել: Կովին փոքրի պետք է հանել կողքի ծայրի թեթև հրումով:

10. Կովին տակ աջ կողմից պետք է նստել: Նախքան նստելը, կովին այնպես պիտի տեղավորել, վոր նրա և հարևան կովի միջև կթողների համար նստելու տեղ մնա: Կովին պետք է ստիպել, վոր նա աջ փոքր հետև գցի. կիթն սկսելուց առաջ փաղաքշական խոսքերով և շոյելով պետք է հանգստացնել նրան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կով վերաբերվելու դեպքում վարժված կովն ինքը պետք չեղած դիրքը կընդունի կթելու ժամանակ:

11. Կթելն սկսելիս՝ նախ և առաջ կուրծքերն ու պտուկները տաք ջրով պետք է լվանալ և կակուղ սրբիչով չորացնել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1 Կուրծքը և պտուկները պետք է լվանալ վոչ թե կթոցից, այլ հատուկ լվալու դուլից:

Յեթե կովերը ցուրտ շնչում են գտնվում, ապա լվանալու փոխարեն՝ կուրծքը մաքուր պետք է սրբել խոնավ սրբիչով:

12. Պետք է կթել չոր ձեռներով, առանց ջրով կամ առավել ևս կաթով թացելու:

13. Յուրաքանչյուր պտուկից առաջին շիթը, փորպեստ աղտոտ շիթ, պետք է կթել առանձին ամանում: Յերկրորդ շիթը ձեռքի մեջ, փորոշելու համար՝ կաթը նորմալ է, թե վոչ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե կաթը նորմալ չէ, ապա առանձին ամանի մեջ լեցնել:

14. Պետք է բուռնացրով կթել, բռնելով պտուկին ամբողջ ձեռքով:

15. Նախ առջևի, իսկ հետո հետևի պտուկներն են կթվում:

16. Կիթը դանդաղությամբ պետք է սկսել, համաչափ և ձկունությամբ, աստիճանաբար արագացնելով աշխատանքը, ամբողջ կուրծն առանց ընդհատումների կթել: Ընդհատումները կովին զրգռում են:

17. Կիթը վերջացնելուց առաջ ամբողջ կուրծը հարկավոր է կանոնավոր տրորել (մասսաժ անել):

18. Տրորելուց հետո պետք է կթել մնացած կաթը և դրանով կիթը վերջացնել:

19. Կթելուց հետո ամբողջ կուրծն և պտուկները չորացնելու աստիճան սրբել և կովին շոյել:

20. Ամեն մի կթող կթում է այն կովերին, վորոնք իրեն են ամրացված: Առանց ղեկավար աշխատողների թույլատվության կթողներն իրավունք չունեն իրար փոխարինելու:

21. Կուրծքի, պտուկների և հենց իրեն, կովի թեկուզ ամենաանոշան հիվանդությունների մասին պետք է հայտնել անասնաբուծին:

Նորածին հորթերի սնուցանելու կանոնները.—Քանի վոր բացի կթելուց, կթողների պարտականությունն է նաև սնուցանել այն նորածին հորթերին, վորոնք ծնվել են կթողին հանձնված կովերից, դրա համար էլ կթողը ծանոթ պետք է լինի նույնպես նորածին հորթերին սնուցանելու կանոններին: Ներքևում մենք կբերինք այնպիսի կանոններ, վորոնք ներկայումս ընդունված են Ուրուսկայի կաթնատնտեսական կայանի կողմից *):

1. Առաջին անգամ հորթը կերակրվում է ծնվելուց 6 ժամ հետո և իբրև առաջին բաժին, ստանում է 1/4 լիտր դալ, հետագայում հորթը կերակրվելու յե որեկան 4 անգամից վոչ պակաս և առաջին, յերկրորդ և յերրորդ օրվա ընթացքում իբրև բաժին ստանում է 1/2 դուլ դալ, չորրորդ օրը յերկու անգամ կեսական լիտր, յերկու անգամ 3/4-ական և 2 անգամ մեկական լիտր, 7-րդ օրը՝ 4 անգամ մեկական լիտր: Շատ փոքր կամ շատ խոշոր հորթերի համար, վերոհիշյալ կանոնից այս կամ այն կողմը կարելի յե նահանջել միայն ավագ հորթապահի կամ գոտեխնիկի ցուցմունքներով:

2. Հորթերի համար դալ կթելիս պետք է պահպանել կթելու բոլոր կանոնները, այսինքն կուրծն սկզբում պետք է լվացվի և դալի առաջին շիթերը պետք է կթվեն առանձին: Թույլ չպետք է տալ, վոր հորթին արյունախառն կամ թարաթույլ չպետք է տալ, վոր հորթին արյունախառն կամ թարաթույլ չպետք է տալ, վոր հորթին արյունախառն կամ թարաթույլ չպետք է տալ:

* Այս կանոնները հիմնականում մշակված են Ուրուսկայի կաթնատնտեսական կայանի աշխատակից գոտեխնիկ Մ. Ն. Ժակի կողմից:

3. Հորթերին կերցնելու ժամանակ դալը պետք է ունենա 38 աստիճան ջերմություն (ըստ Յելսինուսի):

4. Հորթին պետք է վարժեցնել առանց մատի ոգնության խմելու, մատը տալ նրան միայն ծայրահեղ դեպքում: Այն հորթերը, վորոնք վարժվել են մատով խմել, նրանք պետք է սովորեն ինքնուրույն խմել՝ ընդհանուր կաթից սնուցանելու մոմենտին (8-րդ որից վոչ ուշ):

5. Ահեն անդամ կերցնելուց հետո, հորթի մոռութը ջրով պետք է լվացվի և չորացվի: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ստորին ծնոտը սրբելու վրա:

6. Հորթն ամբողջ ժամանակ յերախակալ պետք է հազած ունենա. յերախակալը հանվում է միայն ուտելու ժամանակ: Առանց տաք ջրում յեռացնելու թույլ չպետք է տալ վոր մեկ հորթի յերախակալով մի ուրիշին հազցվի:

7. Յուրաքանչյուր հորթից հետո դույլը վողողել նախ առը, ապա տաք ջրով: Հորթերին սնուցելուց հետո դույլերը պետք է լվայվեն սոդախառն յեռացած ջրով:

8. Ուշադրությամբ պետք է հետևել հորթի ստամոքսի դրուժյանը և յեթե վորեւե աննորմալություն պատահի (փորհարություն, փորկապություն), հատուկ ուշադրությամբ հետևել, վոր հորթը ժամանակին կկղանքից աղատվի, իսկ յեթե նա մի ամբողջ օր չի թրքել. դրա մասին հայտնել ավագ հորթապահին կամ զոտեխնիկին:

ԿԱԹԻ ԽՆԱՄԲԸ

Մենք արդեն խոսեցինք այն սիջոցառումների մասին, վորոնք ապահովում են մաքուր, առողջ և կայուն քանակությամբ կաթի ստացումը, այսինքն՝ կուրծքը, կթողի ձեռքը, հագուստը, ամանները մաքրելը:

Կաթի խնամքն սկսվում է կթելու մոմենտից և վերջանում է մինչև սպառման և վերամշակման ուղարկելը:

Նոր կթված կաթն իսկույն գոմից պետք է հեռացնել, վորովհետև անասունների ազդած շենքում կաթի մեջ կարող են ընկնել ամեն տեսակի մակարոյձներ, աղտեղություններ, փոշիներ, չոփեր և դեռ հոտեր, վորոնք փչացնում են կաթը:

Առանձին կովերից ստացված կաթը լեղվում է նախապես մաքրված կաթնաբանների մեջ: Դրա համար կաթնամանի վրա վերևից դրվում է մալ կամ քամիչ: Յեթե ինչ-ինչ պատճառներով տնտեսութունը այդպիսիները չունի, ապա կաթը քամվում է մաքուր կտավով կամ մի քանի տեսակ ծալված մաուլայով:

Քամիչները մոտավորապես սաքրում են այսպես. հատակ շունեցող քամիչների ռեզերվուարում դրվում են մետաղյա մաղեր, վորոնցից վերիններն ունեն խոշոր, իսկ վարինները — փոքր ծակեր: Նրանց արանքում դրվում են քամբակե քամիչներ: (Տես նկար 15):

խոշոր մաղերը կեղտի ավելի խոշոր մասնիկներ — հարդի, կերի և աղբի, միջատների մասնիկներ պահելու համար են, իսկ փոքրերը — ավելի մանր մասնիկներ, տիղմ — կենդանիների մաղեր, փոշի և ցեխ պահելու համար են: Տիղմի և աղտի այս կտորտանքներն իսկույն պետք է հեռացնել, քանի դեռ սրանք խոշոր փառ չեն հասցրել:

Քամբակե քամիչը չեն լվանում, նա պետքական է միայն մի կթի և 8—10 դույլից (մոտ 3 բիզոն) վոչ ավելի կաթ դտելու համար: Մի անգամից մեծ քանակությամբ կաթ քամելու դեպքում, քամբակե քամիչը հարկավոր է փոխել: Ողտադործված քամիչները պետք է դեն գցել:

Կթելիս, լավ կլինի, յեթե կաթի հավաքումը տեղի ունենա վոչ թե այն շենքում, ուր կովերն են կթվում, այլ հատկապես շինված ընդունարանում, վորը մյուս շենքերին միացված է միայն պատուհանով, վորտեղից կաթով լիքը կթոցը հանձնվում և կաթ չափողին: Մնացած ժամանակ պատուհանը փակ պետք է պահել:

Յեթե կաթի հավաքումը գոմում կատարվի, ապա նա, բացի գոմի ամեն տեսակի զգվելի հոտեր ծծելուց, ողից ամենայն հեշտությամբ փոշու հետ միասին ընդունում է նաև ամեն տեսակի բակտերիաներ, վորոնք կաթը շուտ փչացնելու լինթակա յեն դարձնում:


Իսկ յեթե կաթ հավաքելու համար գոմում առանձին կղզիացված շենք չկա և կաթի հավաքումը շենքի ներսումն է կատարվում, այդ դեպքում կաթնամանները պետք է դնել վորեւե դռան մեջ, վորտեղ կաթը շիւղում ունենար վոչ թե գոմի ողի, այլ դրսի մաքուր ողի հետ:

Այն կաթը, վոր չի նշանակված անմիջական սպառման կամ վերամշակության համար, այդպիսին հենց տեղում պետք է սառեցնել: Կաթն ինչքան շուտ սառեցվի, անքան նրանում ավելի քիչ կզարգանան բակտերիաները: Սառը կաթում բակտերիաների զարգացումը չափազանց դանդաղում է: Կաթի սառեցման ամենաարագ և ապատեխնիկական միջոցը



Նկար 15. Քամիչ

— դա սառցարանների միջոցով կատարվող սառեցումն է։ Բո-
լոր սառցարանները հիմնականում լերկու տեսակի են բաժան-
վում—խողովակաձև և կլոր։



Նկար 16. Բոլորի ու Ֆոգելի սառցարանը։
Ձախից—լայնությունը կտրվածք

Խողովակաձև սառցարան-
ներում (տես նկար 16)
սառը ջուրը ճնշման ազդե-
ցությամբ վեր է բարձրանում
իրար վրա դարձված խողո-
վակների միջոցով։ Նա գա-
լիս լցվում է ստորին (առա-
ջին) խողովակի մեջ սառը
փճակով և տաք փճակով
վերևի խողովակից դուրս է
թափվում։ Իսկ կաթը սառցա-
րանի վերևի մասում գտնվող
ընդունարանից և ալիքաձև
խողովակների վրայից դեպի
ներքև է հո-



սում։ Նա տաք
փճակով գա-
լիս է վերևի
խողովակը և
ներքևի խողո-
վակից հոսում
է դեպի տակը
դրված ամանը,
վոր համարյա
սառեցված է
լինում սա-

թի սառելու տարածությունը բավականաչափ ընդարձակ է
լինում և կաթն արագությամբ սառում է։ Զուրն ինչքան սառ
լինի, կաթն այնքան ավելի շատ է սառչում։ Կաթը սառչում
է այն հաշվով, վոր նա վաճառքի տեղը համար 15 աստիճանից
վոչ ավելի բարձր ջերմությամբ։ Այդ իսկ պատճառով, նայած
առաքման հեռավորության՝ կաթն առաքման վայրում սառեց-
վում է մինչև 12—10—8—6 աստիճան ջերմություն։

Սառցարանի արժեքը վորոշվում է նրա մի ժամվա արտա-
դրողականությամբ։

Վորպեսզի ամառ ժամանակ հնարավոր լինի ավելի շատ
սառցանել կաթը, դրա համար սառը ջրով լեցուն տակառում
սառույց են դնում։ Յերբեմն, մանավանդ սաստիկ շոգ ժամա-
նակ, չի հաջողվում 10—12 աստիճանից ցածր սառցանել կաթը։
Այդ դեպքում կաթով լեցուն կաթնամանները մի վորոշ
ժամանակ պետք է թողնել սառը ջրով կամ սառուցով լիքը տակառ-
ներում։ Այս յեղանակով հնարավոր է սառցանել նաև այն կա-
թը, վոր նախապես սառցարանում չի սառցված։ Սառցանելու
այս ձևն ավելի դանդաղ է, ավելի քիչ նպատակահարմար է,
վորովհետև, ինչպես վերևումն ասեցինք, կաթի արագ սառե-
ցումը նրան ավելի դիմացկուն է դարձնում։

Ամեն տեսակի կաթի սառեցումը պետք է կատարել ա-
ռանձին, լավ ողավորված, մաքուր շենքում։ Վոչ մի դեպքում
չի կարելի կաթը սառեցնել գոմում, վորովհետև նա ծծում է
ամեն տեսակ զգվելի հոտեր։ Ամենից ավելի լավ է կաթը սա-
ռեցնել հատկապես շինված կաթնային կամ սառեցնող շենքերում։

Տաք, նոր կթված կաթով լեցուն ըրդոններ պահելու կամ սառ-
ցանելու ժամանակ չի կարելի կափարիչով պինդ փակել։ Նրա-
նից կաթը հոսում, արագությամբ փչանում է։

Կաթը պահելու շենքերը զով պետք է լինեն և ունենան
8 աստիճանից վոչ բարձր ջերմություն։ Նրանք պետք է ապա-
հովված լինեն ողավորող սառցավորումներով (Մուերի խողովակ-
ներ, լուսամուտի բացվող փեղկերը)։ Շենքը միշտ մաքուր պետք
է պահել։ Հատակը, պատեր, առաստաղը տարին մի քանի ան-
դամ պետք է սպիտակացվեն նոր հանդած կրով, վորպեսզի ճեղ-
քերում զարգացող բակտերիաները վոչնչանան։ Այսպիսի շենք-
երում չի կարելի նեխվող, վատ հոտ ունեցող նյութեր պահել,
ինչպես, որինակ՝ ձուկ, թթու կաղամբ և այլն։

Կաթի թթվելու առաջին առնող վոչ մի նյութ չի կարելի
կաթի մեջ խառնել, վորովհետև դա կարող է վատ անդրադառ-
նալ թե մթերքի վորակի և թե սպառողի առողջության վրա։

սառցարանը լեկող ջրի աստիճանին։

Կլոր սառցարանն արտաքուստ նմանվում է վերևի կողմը
մի փոքր նեղացած գլանի, վորն ունի ալիքաձև պատեր։ Նրա
ներսում դրված է վորոշ պատերով մի ուրիշ գլան։

Այս յերկու պատերի միջև ներքևից վերև է հոսում սա-
ռեցնող ջուրը։ Ինչպես խողովակաձև սառցարանում, այնպես
եւ այստեղ, սառեցվելիք կաթը հոսում է ալիքաձև գլանի վը-
րայից։ Այս յրկու ալիքի սառցարաններն ունեն աշխատանքի
բոլորովին միատեսակ սկզբունքներ։ Նրանք իրարից միայն ար-
տաքին ձևով են տարբերվում։ Յեւ վորովհետև կաթը պատե-
րով միայն ետրակ շերտով է հոսում, այդ իսկ պատճառով կա-

Ձի կարելի նույնպես պահելիս տաք կաթը խառնել արդեն սառեցված կաթի հետ:

Սառցարանների կառուցումը.— Հյուսիսային Կովկասի պայմաններում ավելի նպատակահարմար է գետնահարկ սառ-
չարաններ կառուցելը՝ Նրանք ամենապակասը յերկու բաժին-
ներից պետք է բաղկացած լինեն, վորոնցից մեկը՝ սառույց
պահելու, իսկ մյուսը՝ (վորն անցքերով տաջնին է միացված)
մթերքներ պահելու համար: Սառույցի պաղությունն ստորին
անցքով գնալու յե դեպի սառեցնող սենյակը, ուր պահվում են
մթերքները: Իսկ տաք ողը վերի անցքի միջոցով սառեցնող
սենյակից սառցարանն է գնում: Ողի այդպիսի մշտական շը-
ջանառությունն ապահովում է սառեցնող սենյակի անհրաժեշտ
սառնությունը:

Սառեցնող սենյակը պետք է ունենա ողավորող խողովակ-
ներ, թարմ ող ստանալու համար, ինչպես նաև պետք է ունե-
նա սենյակի ներսը լուսավորող պատուհաններ: Վորպեսզի
սառցարանն ավելի լավ կղզիացվի դրսի տաք ողից, դրա հա-
մար դռները և լուսամուտները կրկնափեղկ պիտի շինել:

Մթերքները (սեր, հում սեր, յուղ և այլն) փոքր աման-
ներում պահելու համար, շինվում են դարակներ: Սառցնող
սառուցամաններ դրվում են դարակների վրա:

Կարն ուղարկվում էմետաղյա բիդոններով, վորոնք
շինվում են թանձր կլայեկված թիթեղներով: Այսպիսի բի-
դոնները ներկայումս պատրաստում են 4 լիտր տարողու-
թյամբ:

Վորպեսզի կաթը ճանապարհին չթափվի, դրա համար բի-
դոնի բերանը պինդ փակում են կամ ճիշտ բերանի չափով
շինված կափարիչով կամ կափարիչը սերս շինված խիտ ու-
տինե խցանով: Թե մեկ և թե մյուս դեպքում կաթը բիդոնի
փակ կափարիչից չի թափվում:

Ճանապարհին կաթի կեղծելը թույլ չտալու նպատակով
բիդոնները բանալիով կողպվում կամ կնքվում են: Կողպեքի
բանալիները գտնվում են թե սղարկողի և թե ստացողի
մոտ:


Վորպեսզի ճանապարհին բիդոնները շատ չցնցվեն և դը-
րանից կաթը չվատանա, դրա համար կաթը պետք է ուղարկել
ռետորավոր կառքերով: Ինչպես վերևումն ասեցինք, մանավանդ
հեռու տեղ ուղարկվող ամբողջ կաթը նախապես պետք է սա-
ռեցվի: Ճանապարհն ինչքան հեռու, յեղանակն ինչքան շոգ
լինի, կաթն այնքան ավելի շատ պետք է սառեցվի:

Շոգ ժամանակ ուղարկվող կաթը փշանալուց գերծ պա-
հելու նպատակով, ավելի լավ է բիդոններն ամբողջությամբ
թաց պարուսինով ծածկել, իսկ ձմռանը սառելուց փրկելու
համար՝ հարգով կամ դարմանով շրջապատել: Ձմռան ժամա-
նակ, նայած իհարկե ցրտին, ուղարկվող կաթը չափավոր պետք
է սառեցնել, իսկ խիստ
սառնամանիքներին՝
նույնիսկ բոլորովին կա-
րիք չկա սառեցնելու:
Այսպիսով կաթը սպառ-
ման վայրն է դալիս
բավականաչափ պաղ,
բայց վոչ սառած:

Կարից յուղ կամ սեր
պահպանելու կանոն-
ները յեվ սեզաի
խնամքը.— Յերբ սնտե-
սությունը կաթի սպառ-
ման վայրից հեռու յե
գտնվում և հնարավոր
չէ ամեն ոը մեծ քանա-
կությամբ անարատ կաթ
փխադրել, այդ դեպքում
վորոշ ժամանակ անց՝
կաթից սեր է հանվում:
Իսկ շիջուկը գործած-
վում է կամ հորթերին,
խոզերին կամցնելու կամ
թե հենց տեղում նրա-
նից լու, բնապանիր և
այլն պատրաստելու հա-
մար:

Սեր պատրաստելու
համար ներկայումս ա-
մենից ավելի հաճախ
պրծածվում են սերգատներ (սեպարատոր) (տես նկար 17),
քանի վոր նրա միջոցով կաթի յուղն ավելի մաքուր և արագ
է հավաքվում:

Իսկ սերգատները կաթնատնտեսության մեջ նորություն
չեն: Նրանց կառուցվածքը շատերին ծանոթ է, դրա համար



Նկար 17. Սերգատ (սեպարատոր)

ել մենք կանգ կառնենք միայն այն կանոնները վրա, վորոնք պետք է պահպանվեն սերգատումն կատարող մարդկանք կողմից:

1. Սերգատման յենթակա կաթը պետք է ունենա 28—35 աստիճան ջերմության ըստ Յելսիուսի: Դրա համար նոր կըթված կաթը կարելի չէ սերգատել ուռանց նախապես տաքացնելու: Արդեն պաղած կաթը թեթե կերպով տաքացվում է դույլերի կամ կաթնամանների մեջ, վորոնք դրվում են տաք ջրում մինչև այն ժամանակ, քանի դեռ կաթը պետք չեղած աստիճանի չի տաքացել:

Սերգատն ուղիղ պետք է դրվի և լավ ամրացվի: Աշխատանքի ժամանակ յենթե սերգատը շարժվի, նա կտրող է շուտ փչանալ:

3. Աշխատանքից առաջ յուզող անցքերը սերգատի քսելու յուզով լեցուն պետք է լինեն:

4. Սերգատը գործի դրելիս՝ կաթը շատ դանդաղ պետք է պտտեցնել, իսկ հետո աստիճանաբար նրա պտույտն արագացնել:

5. Յենթե կոթը մի բուլեյում պտույտների լրիվ թիվը կատարելու լինի (մի բուլեյում 50—60 պտույտ՝ նայած սերգատի մարկային), այն ժամանակ ծորակը բաց են անում և սերգատի թասից կաթը հոսեցնում են բարաբանի մեջ (ծորակը նույնպես աստիճանաբար պետք է բաց անել):

6. Ամբողջ աշխատանքի ընթացքում սերգատի կաթը համար է սահմանված:

7. Սերգատի կանոնավոր աշխատանքը յերկու ժամից ավելի չի կարող շարունակվել, վորովհետև բարաբանում կաթից շատ կեղտեր են կուտակվում, և այդ պատճառով սերը լրիվ չի գատվում: Բարաբանը մաքրելուց և լվանալուց, սերգատը կրկին անգամ յեղելուց հետո, աշխատանքը կարելի չէ շարունակել:

8. Սերգատումն ավարտելուց առաջ սերգատի ընդունարանում պետք է լցնել 3—4 լիտր ոռբատ, վորպեսզի բարաբանից սերն ամբողջովին քամվի:

9. Աշխատանքը վերջացնելուց հետո չի կարելի զոռով կանգնեցնել դեռևս պտտվող բարաբանը, վորովհետև դրանից սերգատը կարող է փչանալ:

10. Յենթե բարաբանը պտտվելուց դադարեց, սերգատը քանդում են, նախ սառն, ապա տաք ջրով լվանում և չորացնում են:

11. Սերգատի բոլոր բանուկ մասերը (ատամները) և յուղամանները տարին մի քանի անգամ կերասիխով մաքրվում և լվացվում են:

Յենթե սերգատները լավ խնամվեն, կանոնավոր յուղվեն և սերգատման հիմնական կանոնները պահպանվեն, այդ դեպքում սերգատները յերկար ժամանակ կաշխատեն և սերն ել լավ կգատվի:

Կաթնամանների խնամքը.— կաթը կթելու և պահպանելու համար պետք է գործածել միայն մետաղյա ամաններ: Փայտե ամանները կաթը շուտ են փչացնում: Նրանց անկյուններում, ճեղքերում և կողքերում կուտակվում են կաթի թթվածնով մասնիկներ, վորոնք վնասակար բակտերիաներ են պարունակում: Այդ բակտերիաները թթվացնում են այդ ամանների մեջ լըցված թարմ կաթը: Բացի դրանից, դժվար է փայտե ամանները մաքուր պահել:

Կթոցները, կաթ հավաքելու, պահելու ամանները, քամիչները, պղնձե ամանը կլայելված թեթեղից պետք է լինեն, իսկ լվանալու դույլը — ցինկապատ յերկաթից կամ սպիտակ թիթեղից:

Յենթե կաթնամանի կլայելի շատ տեղերում թափվել է, ապա այդպիսին տնպետքացվում է փոխվում է նոր ամանով:

Ժանդոտվելը ցույց է տալիս, վոր կաթի ինվենտարը լավ չէ, նախ՝ վաղուց գործածվող կաթնամանը սառ ջրով պետք է վողողել, իսկ հետո լվանալ սողախառն յեռացած ջրով: Մանավանդ խնամքով պետք է լվանալ անկյունները և ըով: Մանավանդ վորովհետև նրանցում ավելի շատ են հակվորված տեղերը, վորովհետև նրանցում կաթնամանները կավաքվում կաթի մնացորդները: Տաք ջրից անկյուններում կավաքվում կաթի մնացորդների խմորում և ըող է տեղի ունենալ կաթնային մնացորդների խմորում և այդ իսկ պատայն ժամանակ դժվար կլինի նրանց լվանալ, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում սկզբից ամանը սառ ջրով լվանալ:

Ցանկալի չէ լվանալուց հետո ամանը յեռացած ջրով տաքացնել կամ յենթե հնարավորութուն կա, տաքացնել շոգիյով: այդ միջոցով բակտերիաները վոչնչանում են:



Նկար 18. Կլոր ձեղի կրաման

կ'ացված ամանն ամառը դ'ուռն են արնի տակ (հատակը ղեպի վեր), ձմրանը վորպեսզի միջի ջուրը թափվի, շուռ են տալիս կաթնարանում տնկված հատուկ մաղափոր կանգնակների վրա:

Կաթնարանները շինում են գոմին մոտ: Կաթնարաններում տաքացնում են ջուրը՝ կթելու և կովի կուրծքերը լվանալու համար, պահում են ամանները, սրբիչները, արտահագուստները, կաթից սեր են հանում և այլն: Սովորաբար կաթնարաններում կամ նրանց կից շինում են օսոցարաններ: Կաթնարանի մեծությունը և սենյակների թիվը կախում ունի նրա կատարելիք ղեկից և աշխատանքների ծավալից (այսինքն ֆերմայի մեծությունից):

ԿՅԱՆ ԿՈՎԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Բացի ճիշտ կթելուց, կովերի կաթնատվություն վրա ազդում են նաև անասնին խնամելու և կերակրելու պայմանները: Մի շարք տնտեսություններում կթողների պարտականությունների մեջ կթելուց բացի մացրել են նաև անասուններին խնամելու և կերակրելու պարտականությունը: Այդ իսկ պատճառով կթողը լավ ծանոթ պիտի լինի նաև այս գործի տեխնիկային:

Տեղի սղության պատճառով մենք այստեղ մանրամասնորեն կանգ չենք առնի այս գործի տեխնիկայի վրա: Դրա մասին հրատարակվել են մի շարք զբոսայկներ*): Այստեղ մենք կանգ կառնենք միայն այն հիմնական մոմենտների վրա, վորոնք պետք է նկատի առնի կթող-անասնապահուհին իր առօրյա աշխատանքում:

Կովերի կերակրումը.— Իբրև կանոն, ըրոր կաթնատու անասունները կուտենություններում նորմալով պետք է կերակրվեն: Նորմալով կերակրվելիս անասունն ստանում է այնքան կեր, ինչքան վոր պահանջվում է կյանքը պահպանելու և կաթ արտադրելու համար: Նորմալով կերակրումն անասնին տալիս է սննդաբար նյութերի ճիշտ այն քանակությունը, վորպիսին նա պահանջում է: Այս դեպքում ավելորդ կեր չի ծախսվելու և անասունը քաղցած չի մնալու Քաղցած մնալու


դեպքում կովը լրիվ չի կարող տալ կաթի այն քանակությունը, վորպիսին նա կար, յեթե լավ կերակրվեր: Իսկ յեթե չափից ավելի կերակրվի, ապա նա կգերանա նույնպես ի վնաս կաթնատվության:

Նորմալով ճիշտ կերակրելու համար հարկավոր է վորոշել անասնի կենդանի քաշը և որակա՞ն կիթը: Այս նպատակով անասունը սովորաբար ամիսը մի անգամ կշռվում է և ամեն որ կամ պարբերաբար (5 որը կամ 10 որը մի անգամ) հաշվի յե առնվում որակա՞ն կիթը: Անասունը և կիթը կշռելու փոխարեն կարելի յե չափել*): Կովերի կիթը չափելու համար պատրաստվում են հատուկ ամաններ, վորոնք չափի նշաններ ունեն: Այդ նշանները ցույց են տալիս ամանում յեղած կաթի քանակը: Այդ ամանները կոչվում են կաթնաչափեր:

Կովին պետք է տալ զանազան տեսակի կերեր: Դա նրան հնարավորություն է տալիս ստանալու, թե բավականաչափ քանակությամբ և թե զանազան տեսակի (գլխավորապես կերի սպիտակուցային նյութերի վերաբերմամբ) կեր: Դրանով անասունը թե լավ է յուրացնում ալը կերերը և թե շատ է կաթ տալիս:

Անասնին պետք է տալ կավիճ և աղ, վորոնք նրան անհրաժեշտ են թե նորմալ մարտողության թե մթերքի մանափանդ կաթի), հանքային նյութերի կորուստը փոխարինելու, թե վոսկորների զարգացման համար: Անասունն ամեն որ 2—3 անգամ մաքուր ջուր պետք է խմի: Ինչքան բարձր լինի անասնի մթերատվությունը, այնքար ավելի շատ ջուր կգործածի նա:

Կերը լավ վորակ պետք է ունենա, այսինքն՝ նեխված և հոտած չլինի: Վատ կերերն առաջ են բերում անասունների հիվանդություններ և անդրադառնում են մթերքի վորակի վրա: Ամուսնը անասուններին արոտատեղերում պետք է կերա-



Նկար 19. Կարկաչով. խոզակով

* Գյուղատնտես Ժան Մ. Կ. շինյալն պետք է ճիշտ կերակրել կրոն կովերի կուտենություններում հրատ. շէյուս. Կովկաս 1931 թ., գինը 15 Կ. Վ. Մ. Նոսալսկյ Վ. Սոսնի մեխովա խմամբ յեվ կերակրումը հրատ. շէյուս. Կովկաս 1932 թիվ, գինը 30 կոպեկ: Կոպուտիմ Վ. Ա. Կաթնատու անասունների ամառվա խնամքի կազմակերպումը կուտենություններում հրատ. շէյուս. Կովկաս 1932 թիվ:

* Կարգացե Վ. Ա. Կապուտինի (կաթնատու անասնի ամառային խնամքի կազմակերպումը կուտենություններում) և Արածատեղիները փոխարինեցե ցանովի արոտավայրերով:

ցըում և դրա հետևանքով աշխատող ձեռքերի համար աշխատանքն այնքան ձանձրալի չի լինի, ինչպես դա լինում է այն ժամանակ, յերբ նրանք միայն կթելով գբադվեն: Որեկան կթի առատութիւնը և կովի կաթնատվութիւնն ամբողջապես կախում կուենան միմիայն կթողների շնորհքից և ջանասիրութիւնից: Բացի դրանից, բավական թվով տղամարդու աշխատող ձեռքեր կազատվեն, վորոնք կարող են ուսուցործվել թե կալտեսութիւն ուրիշ ներքին աշխատանքների համար, վորոնք գլխի ֆիզիկական ուժ են պահանջում, և թե արդու-նաբերական ձեռնարկութիւններն ուղարկելու համար: Յեթե կթողների աշխատանքն այս ձևով կողմակերպվի և գործավար-ձային—պարզեցաւրական մեթոդ կիրառվի, ապա շատ կաթ կարելի յի ստանալ:

Գոմն ազրից մաքրելու աշխատանքը, վորպես ֆիզիկական մեծ ուժ պահանջող աշխատանք, հանձնվում է տղամարդկանց վորոնց աշխատանքը կարելի յի գնահատել ըստ քանակի և վորակի, այսինքն հաշվառելով, թե քանի գլուխ անասնի աղբ է մաքրվել և ինչպես է մաքրվել: Միևնույն ժամանակ գոմը մաքուր պահելու համար նրանք պետք է պարզեցաւրվեն:

Իբրե կանոն, կթողների աշխատանքը պետք է կազմակերպվի անհատական գործավարձը կիրառելու, համասարեցումը և դիմադրկութիւնը վերացնելու հիման վրա: Սրա համար գոմի բոլոր կովերը յերկար՝ ժամանակով պետք է ամրացվեն վորոշ կթողներին, վորպեսզի մշտապես և կանոնավորապես կարողանան սպասարկվել: Տվյալ դեպքում ամենաշատ կաթ տվող, վատ կթելուց ամենաշատ ազդվող կովերին պետք է ամրացնել ամենալավ կթողներին*):

Սրան զուգընթաց հարկավոր է հաշվի առնել նաև յուրաքանչյուր կթողի աշխատանքը, վորպեսզի հետագայում հնարավոր լինի ձիշտ վճարել կատարված աշխատանքը ստացված մթերքի քանակի և վերակի համաձայն:

Գործավարձը մտցնելիս խոշոր նշանակութիւն ունի արտադրանքի նորմաների ձիշտ սահմանումը: Տեղերի համար մեծ մասամբ ուղարկված են, իսկ շատ զքըռյկներում բերված են արտադրանքի նորմաներ (իբրե որինակ): Յուրաքանչյուր անտեսութիւն վորպես որինակ պետք է ընդունի այս նորմաները և նրանց հիման վրա սահմանի սեփական, իր տրեստեսութիւն պայմաններին համապատասխանող, ձիշտ նորմաներ:

*) Կովերը կթողներին ամրացնելուց առաջ պետք է ուսումնասիրել թե կովերին և թե կթողներին վորակավորման աստիճանը:

Նայած թե ինչքան են լավացել աշխատանքի պայմանները, ինչ չափով է տիրապետել անտեսութիւնը կթելու և խոնամելու տեխնիկային, ինչպիսի ուսցիտաւացնող և գլուտաւրական առաջարկութիւններ է մտցրել, լավագույն հարվածային կթողներն ինչքան են բարձրացրել արտադրանքի նորմաները, ըստ այնմ ել պետք է պարզեցաւր վերաշինել նորմաները և ավելացնել:

Ստորև կրեքներ որինակելի արտադրական նորմաներ, վորոնք ընդունված են ցեղային կաթնատու անասունների Համամիութենական Տրեստի անտեսութիւններում:

Գրգների տրագրական նորմաներ Ուրալսկայի կաթնատեսական գոսային կայանի ցնեսուրկան մեջ

Որեկան մի- ջին կիթ լիտրով	Բեռնավորման նոր- ման կթելու համար (գլուխ)	Կթելու որական նորման լիտրներով	Կթելու վարձը լիտրով որական կթելու արժեքը 1 աշխոր հաշվելով (100- րդական լիտր)
15	10	150	0,66
13	11	143	0,70
11	13	143	0,70
10	14	140	0,71
9	15	135	0,74
8	16	128	0,78
7	17	119	0,84
6	18	108	0,93
5	20	100	1,00
4	21	84	1,19
3	23	69	1,45

Յերկրկուտմիութիւն 1932 թ. հունվարի 10-ի և Կու-
տեսկենտրոնի 1932 թ. փետրվարի 14-ի վորոշումների համա-
ձայն կթողի և անասնապահի աշխատանքը մտցվել է ծանր
աշխատանքների շարքը, այսինքն յերրորդ խումբը, և գնահատ-
վում է 1 աշխոր՝ սահմանված որական նորման կատարելու
դեպքում: Այս գնահատումից յեղնելով, 1 լիտր կաթ կթելու
արժեքը հավասար է որական արտադրանքի նորմայի 1 հար-
յուրերորդական մասին: Որինակ՝ կթողին տրվում է 2 կով
15 լիտր որեկան կթով, 2 Կով—11 լիտր կիթով, 2-ը—8 լիտ-
րով, 2-ը—8 լիտրով, 2-ը—6 լիտրով, 2-ը—4 լիտր և 2 կով-

*) Կթողը կատարում է միայն կով կթելու պարականութիւնը: Թեև Ուրալս-
կայի կաթնատեսական կայանի անտեսութիւն մեջ կան նաև կովերին
խնամող և կթող կանանց բրիգադներ, բայց նրանց արտադրանքի նորմաներն առայժմ
չենք բերի, վորովհետեւ այս բրիգադները նոր են կազմված և աշխատանքի մեջ դեռ
քիչ փորձ ունեն:

Կրող անասնապահուհիների արտադրանքի նորմաները՝ ընդունված
«Գործնական» խորհրդակցության մեջ

Կովերի թիվը մի կթող-անաս- նապահի համար	Մի կովի որ- պան միջին կիթը լիտրով	Կթելու որական նորման լիտրներով	Գործավորության գնահատումը մի որում	
			1 զլուխ ա- նասունից	1 լիտրից
7	13,3	93	3:8 հար	0,79 հար.
8	11,0	88	» »	» »
9	9,3	84	» »	» »
10	7,9	79	» »	» »
11	6,7	74	» »	» »
12	5,8	69	» »	» »
13	5,0	65	» »	» »
14	4,3	60	» »	» »
15	3,6	54	» »	» »
16	3,1	50	» »	» »
17	2,6	45	» »	» »
18	2,2	40	» »	» »
19	1,8	35	» »	» »
20	1,5	30	» »	» »

3 լիտր կիթով, տպա սյա բոլոր կովերից կթված կաթը հա-
վասարվելու յե 100 լիտրի։ Այս դեպքում 1 լիտր կթելու
արժեքը 1 հարյուրերորդականին ե հավասարվելու։ Մի որվա
աշխատանքը գնահատվելու յե 1 աշխոր (100 հարյուրերդա-
կան)։

Վորպեսզի ավելի հեշտ և հարմար լինի հաշվել, դրա հա-
մար Ուրուպակայայի գոտային կայանի վերևում բերված նոր-
մաների մեջ մտցրել ենք սյունյակներ, վորտեղ, բացի կթողի
մի որում կթած կաթի զանազան քանակությունից, հաշվի յե
առնված նաև 1 լիտրի արժեքը հարյուրերդական աշխորերով։

Յերը կթողը բացի կովեր կթելուց մաքրում ե նաև կո-
վերին, այդ դեպքում գործավորության գնահատումն առանձին
ե սահմանվում—կովերին մաքրելու համար՝ ըստ գլխի, իսկ
կաթ կթելու համար ըստ լիտրի։ «Գործնական» խորհրդակցու-
թյան մեջ կիրառվող կթող-անասնապահների աշխատանքի գոր-
ծավորության այսպիսի գնահատումները, վար մենք բերել ենք
48-րդ եջի աղյուսակում, կիրառելի յե նաև կոլտնտեսություն-
ների համար։

Որինակի համար, հաշվենք, թե ինչքան ե վաստակում
կթողը, յեթե նա լիովին սպասալի 12 կովերին, վորոնցից

2-ը որական տալիս են 12 լիտր կաթ, 2-ը—9, 2-ը—8,
2-ը—4 2-ը—1,5 լիվր ե 2-ն ել վոչինչ չենտալիս։ Այս կո-
վերից ընդամենը կթում ե 69 լիտր։ Կթողի վաստակը հա-
վասար ե լինում—(12 կով բազմապատկած 3, 8 հարյուրերոր-
դականով=) 45,6 հարյուրերդական, գումարած (66 լիտր×
0,79 հարյուրերդականով=) 54,5 հարյուրերդական հավա-
սարվում ե 100,1 հարյուրերորդականի։

Պրանից ավելի Յուրաքանչյուր Սվեյաքնելու կարգը սահմանվում
ստացված լրա- ցենտների հա- ե այսպես, կոլտնտեսությունը
ցուցիչ կաթի հա- մար ավելաց- Ֆերմային կամ բրիգադին տա
մար։ վում ե 5 աշխոր լիս ե վորոշ առաջադրանք, թե
ինչ քանակությամբ կաթ պետք
ե ստացվի կովերից։ Կովերին
լավ խնամելու ե հիշա պահելու
շնորհիվ կոլտնտեսականները կա-
րողացել են ստանալ սահմանված
չափից ավելի մթերք։ Սրա հա-
մար կոլտնտեսականը վորոշ վար-
ձատրություն ե ստանում, որի-
նակ, ֆերմայի կովերից կոլտն-
տեսականները պետք ե ստանան
1000 ցենտներ կաթ, այնինչ
ստացել են 1050 ցենտներ։ Նշա-
նակում ե, վոր լրացուցիչ քա-
նակությամբ ցենտների համար
կոլտնտեսականներն ստանում
են $50 \times 5 = 250$ աշխոր։

Կոլտնտեսու- Իջեցվում ե 10 Որինակ՝ ֆերման ուներ 1000
թյան սահմա- աշխոր, պակաս գնտների առաջադրանք, այն-
նած առաջա- ստացված յու- ինչ կատարել ե ընդամենը 950
դրանքից պա- ը աքանչյուր ցենտներ. պարզ ե, վոր կոլտն-
կաս մթերքը ըս- ցենտներ կաթի տեսությունը տուգանք պետք ե
տանալու հա- համար։ նշանակի 500 աշխոր ($50 \times 10 =$
մար։ 500), կուերին անուշադիր ե ան-
բարեխիղճ վերաբերմունք ցւլց
տալու համար։

Կոլտնտեսականի Հա ն ց ա վ ո Ր Ե
հանցանքով տնա պետք ե հատու-
կելներին սատ- ցի վնասների
ուսու ե հանձ- արժեքը։
ված իրերի փը-
շանալու համար։

Վորպեսզի կթողի աշխատանքը վողջ տարում հավասարաչափ բաշխվի, դրա համար նրան հարկավոր է ամրագրել թե՛ նորածին, թե՛ հին կթվող և թե՛ չկթվող կովերին: Այն ժամանակ, յերբ չկթվող կովերի մի մասը ծնելուց հետո անցնելու յե նորածինների շարքը, սակավաթիվ կովերի մի մասը անխնամ ե մնալու և այլն:

Աշխատանքի վորակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է պարզեցնել նրանց, ովքեր կատարել են վորակական և քանակական ցուցանիշները, և տուգանել նրանց, ովքեր վատ են արտադրել և պլանային առաջադրանքները թերակատարել են: Պարզեցնելու յոլունն ու տուգանումը կատարվում են բրիգադի կամ կոլտնտեսականի աշխուրելի թիվը բարձրացնելու կամ իջեցնելու միջոցով:

49 եջում մենք բերել ենք սահմանված տուգների որինակներ և այն նվաճումների որինակներ, վորոնց համար կթողները պարզեցնելով են, ինչպես նաև աշխուրելի ավելացման կարգը, վորը սահմանված է Յերկրկոլտնտեսության կողմից:

ՀՈՍՏԻՆԻՆՈՒՄ ԿԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հյուսիսային կովկասի Յերկրային Գործադիր Կոմիտեյի հրատարակած զոոտեխնիկական անասնաբուժական միջինումը անասնաբուժության վերաբերյալ նախատեսում է մի շարք հասարակ միջոցառումներ վորոնք յեթե պարտադրաբար կիրառվեն խորհտնտեսային հատվածի կողմից, ապա զգալի չափով կբարձրացնեն մթերատվությունը և կլավացնեն մեր յերկրամասի անասնաբուժությունը:

Շատ կոլտնտեսություններ, կաթնաապրանքային ֆերմաներ, խորհտնտեսություններ կարող են ավելին կատարել, քան այն, ինչ նրանց պարտավորացնում է Յերկրգործկումը: Իրենց գործնական աշխատանքում առաջավոր սոցիալիստական տնտեսությունները մտցրել են զգալիորեն ավելի շատ միջոցառումներ, վորոնք նպաստում են անասնաբուժության լավացմանը և նրա մթերատվության բարձրացմանը: Դրա շնորհիվ նրանց կովերն ավելի շատ են կաթ տալիս, հաճախ մի քանի անգամ ավելի, քան հետաձուլաց կամ նույնիսկ շարքային կոլտնտեսությունների կովերը:

Համայնացված նախիր ունեցող ամեն մի կոլտնտեսություն, ամեն մի կաթնաապրանքային ֆերմա, խորհտնտեսություն պարտավոր է ուշադրություն դարձնել կարող

դիր զոոմիքիմումի կետերը և հանդիսական զոոտեխնիմումի հիման վրա, պլանի մեջ պետք է մտցնի և մի շարք ուրիշ միջոցառումներ, վորոնք ել ավելի կնպաստեն սոցիալիստական անասնաբուժության զարգացմանը:

Հանդիսական զոոմիքիմումում ցանկալի յե մտցնել կթող անասնապահների աշխատանքին վերաբերվող հետևյալ մոմենտները:

1. 100 տոկոսով կթել հորթ չունեցող կովերին:
2. 100 տոկոսով կատարել կթելու կանոնները:
3. Որական 4—6 անգամ կթել նորածին կովերին:
4. Կթան կովերի սպասարկումը հանձնել կթող-անասնապահներին:
5. 100 տոկոսով վերացնել կթողի հանցանքով առաջացած կուրծի հիվանդությունները:
6. Ավելացնել կաթի մեջ գտնված յուղի միջին տոկոսը մի տարվա ընթացքում 0,5 տոկոսով և այլն:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Տեխնիկային տիրապետելու լոզունգը, վոր դրել է կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը աշխատավոր լայն մասսաների առաջ, յուրաքանչյուր կոլտնտեսականի մարտական լոզունգը պիտի դառնա կոլտնտեսային շինարարության նվաճումներն ամրապնդելու ճակատու: Կոլտնտեսության, խորհտնտեսության և ԿՍՑ-ի յուրաքանչյուր կթող պետք է լավ յուրացնի այս լոզունգը և այն կիրառի կովը կթելու և խնամելու տեխնիկային տիրապետելու ուղղությամբ:

Մեր այս գրքույկը կթողների համար ոժանդակիչ ձևաչարկ է հանդիսանալու այս լոզունգը կատարելու գործում:

Խորհրդային Միությունը, վորը հաղթականորեն անց է կացնում կյանքում առաջավոր կապիտալիստական յերկրներին հանելու և անցնելու լոզունգը, ընկ. Ստալինի վեց պատմական ցուցումների հիման վրա տիրապետելով տեխնիկային, ԽՍՀՄ-ի անասնաբուժության զարգացման ուղղությամբ այնպիսի տեմպեր կվերցնի, վորոնք յերբեք տեսնված չեն կապիտալիստական յերկրներում: Դա մեզ հնարավորություն է տալիս:

... «Յերկրորդ հնդամյակին անասնաբուժության առաջնորդում պիտի աշխատել այնքան մեծացնելու նախիրը և այնքան ավելացնելու ապրանքային մթերքները, վոր հնարավոր

լինի հիմնականում լուծել ԽՍՀՄ-ի անասնաբուժության խնդիրը, ինչպես վոր կուսակցությունը լուծեց հացահատիկի խնդիրն առաջին հնգամյակում» (17-րդ կուսկոնֆերանսի բանաձևից, վորն ընդունված է ընկ. ընկ. Մոլոտովի և Կուլբիշևի գեկուցումների առթիվ)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երթուղություն	2
Կաթի բաղադրությունը և հատկությունը	4
Կրծի կազմությունը և կաթի առաջացումը	13
Կովերին կթելը	20
Կաթի խնամքը	34
Կթան կովերի խնամքը	42
Կթողների աշխատանքի կազմակերպումը	44
Ջոռմինիմում կթողների համար	50
Ֆեղրափակում	51



Отв. редактор
А. Г. Аваньян
Техн. редактор
Г. Маркрян.

№ 2746

Дс-54

Сд. в набор 23/IX—1932 г.
Сд. в печать 23/XI—1932 г.
Объем 3 1/4 печ. листа
Тираж 2000 экз.

Издательство № 1757 Газ.-ки. тип. ССКНЮ. Статформат А5-148+210 Заказ № 4984
Гор. Ростов на Дону.

ՀՀ Ազգային գրադարան



NL0301175

Цена 50 коп.

8219

22.059

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



На армянском языке

В. Л. Капустин

РУКОВОДСТВО ДЛЯ ДОЯРОК

ИЗД-ВО "СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

ГРИБ. ЧО. 40086

Издательство, ул. Чкалова, 38

ГРИБ. ЧО. 40086 (Чкалова, 38)